

ԿՈՍՏԱՆԸՆ ԶԵՐՏԵՆ

Ե Ր Ե Ք Ե Ր Գ Ե Ր

ԿԱՆԵՐԻ ՆԻՍՏԱՆ Ի Ի Ի  
ԱԲՇԱՐԸ ԵՐԿՐԻ ԵՒ ԱԲՇԱՐԸ ԵՐԿՐԻ

4

891.99  
Գ-39

02 JUN 2008

18 NOV 2011

ԿՈՍՄԱՆ ԶԵՐԵՆ

Ե Ր Ե Ք Ե Ր Գ Ե Ր

ԿԱՏԼՈՒ ՏԵՄԵՐ    □    □    □  
ԱԻՇԱՐԸ ԵՐԿՐԻ ԵՒ ԱԻՇԱՐԸ ԵՐԿՆՔԻ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ԺՊԱՐԱՆ  
ԱԻՇՆԱԿ — ՌՅՁ

Այս «Երեք Երգերի» ստաջին մասերը՝ Սիրվարդը՝  
 գրուած են համաշխարհային պատերազմի նախօրեակին, իսկ  
 միւս մասերը անմիջապէս յետոյ՝ արիւնի եւ ողբերգութեան  
 օրերին: Երկի հիմնական ճակատագրական մեղեդին՝ ներքին  
 բովանդակութիւնը ընդլայնելով՝ այլեւս կոչուած էր ընդ-  
 գրկելու նոր հոգեկան սահմաններ, որոնց արարողական  
 բնայթը բնականաբար տարբեր պիտի լինէր եքէ գրէի այսօր:

Հայերէն բնագիրը, այդքան տարիներից յետոյ,  
 լոյս է տեսնում շնորհիւ ազնիւ հայ մի արուեստագէտի եղ-  
 բայրական աջակցութեան, ու լոյս է տեսնում տեղ տեղ սրբա-  
 գրուած, սակայն որոշ շրջանի եւ անհատական փնտռումների  
 անմիջական թափը, լեզուն, մեր պահպանուած:

1931:

Կ. Զարեան:



1736-2008

## ԱՐԱՐԿ

ԽՈՐՀՈՒՐԴ ՉՈՐԱ ՄԱՍՈՎ  
ԸՍԴ ԵՂՁՆԱԿՆԵՐԻ ԹԻՒՆԸ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՄՈՒՆԻՅԻ ՄԱՆՈՒԿ Է,  
ՈՐՈՎՅՈՐԵՒ ԵՐԱՆՔ ՈՐ  
ՍԻՐՈՒՄ ԵՆ ՊԱՐԶ ԵՆ ԻՆՉ-  
ՊԷՍ ԵՐԱՆՆԵՐԸ ԵՒ ԳԻՒ-  
ՐԱՆՆԵՐ՝ ԻՆՉՊԷՍ ԵՐԱ-  
ՆՆԵՐԸ:

Մարգարեան, մի լծակ, զամ ծա-  
ղրկներ:

Հետոմ անտառե մեծ է եւ խիտ:  
Մօտե, անտառագահն յորրոկ մնալը՝  
բաղեղներոյ ճաճոտած, վարդենունե-  
րոյ շրջապատուած:

Կրեւայն սրբեփոն ու անդորր  
քաղանկութիւն եւ թոթոնեկներ  
հարբած վաղքե թոփէ թոփ:

Մանկագործ գարուն է: Չմրուտ  
ու սոստակ ցանող, սէր առնող ու  
սէր յոտող, տայտառ ու վառ գոյնե-  
րոյ մի բաւարար գարուն է:

Հետոմ անտառե խորհրդաւոր  
է եւ մոտ:

### ՄԱՆՆԵՐԳՈՂ

... Ծնունդների տեղահար եղանակին, Աստուած  
իրերի սիրտը խորհրդների բոյրերով է լեցնում, հողը զար-  
դարում, օդը բուրվառում եւ արեւի թեւերով օրհնում եր-  
կիրը անծայր:

Պայծառ, խոնարհ ժամն է անմեղութեան: Լուսէ  
դէմքը յաւիտեանութեան նայում է մեզ՝ ծնունդների տեղա-  
հար եղանակին:

Ալէ՛լուիա, ալէ՛լուիա:

### ՏՈՎԵՐԻ ՉԼՅԱԸ

Անցեալ գիշեր  
պտոյտ եկանք աստղերի շուրջ  
եւ ֆաղեցիւնք ոսկէ լոյսեր, անցեալ գիշեր:  
Հիմա, ահա —  
տրտումները համբուրում ենք,  
շոյում, օծում  
ոսկեգագաթ մեր փոքրերը,  
լուսանանանչ ծաղիկները:

### ՀՈՒՐԵՐԻ ՉԼՅԱԸ

Երկինքները մեր շողշողուն կայլակների  
եւ արծաթէ հայլիների  
մէջն են քառում:  
Ու ծառերի նիւղերը լայն  
սիրոյ ձեռքեր երկարելով,  
մեծ լեռների գագաթներից  
ֆշած բերած  
մեր լուսաւոր կարկանջներում՝  
յոյս են փնտռում:

### ԺԿՂԻՎՆԵՐԻ ՉԼՅԱԸ

Մենք սրբատենչ միաբաններ,  
խնկարկուններ՝  
բոյր ենք տալիս դաշտին, ձորին  
եւ գիշերանց ուրուններին:  
Բոյրե՛ր, բոյրե՛ր...

### ԲՈՂՈՐ ՉԼՅԱՆԵՐԸ

Գարո՛ւն, գարո՛ւն...

### ՄԵՆՆԵՐԳՈՂ

... Եւ դալար մարգագետնի վրայ Նա սփռում է իր  
մեծ աչքերը եւ լուսարձակ իր ձեռքերով ամեն բան շոյում է  
շատ սիրով, որպէս զի ծննունդները ծաղկին մեծ ուրախու-  
թեան մէջ, բացուի ոսկէ արգանդը հողերի եւ պատարագը  
լինի անվերջ:

Ալէ՛լուիա, ալէ՛լուիա:

*ՏՆՈՒՄՄՄՄ, ՍՐԻՆԳԻ ՄԻ ՆՈՒՄԳ Է ԼՈՒՄՄՄՄ.*

### ԺԿՂԻՎՆԵՐԻ ՉԼՅԱԸ

Ինչքան պայծա՛ռ է օրը:

### ՀՈՒՐԵՐԻ ՉԼՅԱԸ

Արեւի աղամանդներ՝  
մեր սիրահարները:

### ՏՈՎԵՐԻ ՉԼՅԱԸ

Սրինգների ձայնը հնչուն  
բաժակներում ծաղիկների —  
մե՛ղր են եռուն  
եւ սրտերում բոցկլտացող  
մեղունների —  
ջե՛րմ են սիրոյ:

### ԲՈՒՐ ՉԷՑԱՆԵՐ

Ի՞նչ օր, ի՞նչ օր...

### ՄՆԱՆԵՐԿՈՂ

Զեփիւոի հետ վարդենու մէջ վագոդ բոցը եւ  
արիւնը դաշտում հսկող հարսնուկի —

ահա՛ լոյսը գարնան տուած երագների:

Հոգիների մեղմակրակ նրագները, խօլ ցանկու-  
քեանց բռնկած բերը. տեսիլների շողշող սուրբ աստղերի  
դէմ կարկառած —

ահա՛ յոյսը գարնան բերած պատրանքների:

### ԺԵՂԻՎԱՆԵՐԻ ՉԷՑԱԸ

Մեր փերքերից

բոց է սահում:

Բգեզների շրթունքներից

աստղ է կաթում:

### ՀՈՒՐՆԵՐԻ ՉԷՑԱԸ

Սիրահարներ, սիրահարներ,

եկէ՛ք տեսէ՛ք —

ամեն կոհակ ունի գլխին մի աղամանդ.

ամեն հոսանք ունի ծոցին

արեւաֆանդ

մի բանդ:

### ՄՆԱՆԵՐԿՈՂ

Այո՛, նշմարտապէս այդպէս է. ձայներ ջերմագին,  
ձայներ լուսատու, ձայներ կեանքի —

Այո՛, նշմարտապէս այդպէս է:

### ՆՐԻՄԱՆԵՐԿ

Զմեռը՝ ինչքան տխուր յիշատակ՝ յաւէտ անցաւ  
իբր երագ դժնդակ:

Արեւի մեծ շրջանին, բնութիւնը արթնացաւ  
հմայիչ եւ դողդոջուն, —

բազմաթե՛ւ թռչուն:

Զմեռը՝ տխուր յիշատակ՝ յաւէտ անցաւ:

Լուսէ՛ մի նաւ

բացեց ծփող մի սուագաստ

եւ ես եղայ խելակորոյս մի նաւաստի:

Ես ո՞ւր գացի եւ ո՞ւր հասայ...

Ահաւասիկ, անտառի մէջ կտրտեցի մի ոստ շխտակ  
եւ փորեցի աստղեր կարմիր: Սրտիս հրավառ

բաբախումը,

թափնաթափուր կածաններով՝

մագլցում է արիւնիս հետ

լեռը անյայտ իմ երգերի:

Բլուրներ, ծառեր եւ ծաղիկներ —

հողերի վրայ քայլող աստղեր,

հորիզոններ՝ սրբափառող՝  
եկե՛ք, եկե՛ք, երաժշտեցե՛ք հոգուս խորքում  
եւ աչքերիս հրաբորբոք մեկնաստանում:

*Ա՛ր թո՛ղուն ցո՛ղուն՝ է:*

Երբ վերջին անգամ սահուն ֆայերով  
նա անցաւ պայծառ, տխուր աչքերով՝  
դալար խոտերը շոյելով յուշիկ —  
Ո՞ր կողմը գնաց, ո՞ր նամբան բռնեց:  
Տեսիլքի նման աչքերս այրեց:

Բարակ թեւերով, նագով — երագով —  
ֆողարկուած, անյայտ, բայց ա՛յնքան ինձ մօտ —  
հովի պէս թեթեւ նա սահեց գնաց:  
Ո՞ր ձայնը կախարդ սիրտը շղթայեց:

Հրապարը նրա խոր վերքերս պեղեց:

Ա՛հ, ինչո՞ւ հիմա խոհերս մոլար  
Սուրում են տխուր եւ անմխիթար  
կանանչ դաշտերում, ինչպէս տենդի նետ,  
ոսկէ տեսիլքիս անյայտ կոյսի հետ:

Նրա ստուերը ներմակ աչքերս այրեց:

**ԲՈՒՐ ՉԱՅՆԵՐԸ**

Լուսաթե՛ւ արեւ,  
երկնային պարգեւ —  
ողջո՛յն քեզ արեւ:  
Գարո՛ւն, գարո՛ւն:

*Ա՛ր ծեփու՛ց ցո՛ մ՛ի տա՛ժանն:*

**ԾԵՓՈՒԿԸ**

Թէպէտ ոտներս թոյլ են եւ տկար, ա՛յն կողմն եմ  
ուզում գնալ եւ նորից. բլրան է՛ն տակը ուր խնձորենին ծաղ-  
կել է սպիտակ: Ձահել ժամանակ այնտեղ խաղ արի եւ երա-  
գեցի՝ երբ կեանքը համայն թւում էր անվերջ մի երագ ոսկէ:

**ԳԱՄԸՆԻՆ**

Բլրան մօտ, հայրիկ, ծաղիկները տեսնես...  
Ձամբուռ, մարեմխոտ, պէս պէս գոյներով, պէս պէս բու-  
րումով: Կարծես ամբողջ օր բերանը բացած արեւ են խմում,  
ինչպէս մի վտիտ լուսէ աղբիւրից:

**ԾԵՓՈՒՆԻՆ**

Շատ նիշտ ես ասում... Տա՛ր ինձ, տղայ ջան,  
տար ինձ որ տեսնեմ ամէն բան նորից: Ինչպէ՛ս կարող է,  
այս պայծառ օդին, այս պլպլացող շողշող արեւին, մարդս  
դիմանայ: Այս օրը դեռ կայ՝ ո՞վ գիտի վաղը ողջ եմ թէ մե-  
ռած: Մեռնելից առաջ ուզում եմ գարնան անարատ գինուց  
մի թաս էլ խմել: Այս օրը դեռ կա՛յ՝ ո՞վ գիտէ վաղը...

**ԳԱՄԸՆԻՆ**

Ողորմի՛ Աստուած... Ասում են ծերը թէ գարնան  
ապրի, էլ ամբողջ տարին թեթեւ կը տանի:

**ԾԵՓՈՒՆԻՆ**

Այդպէս են ասում... Մարդը ի՛նչ է որ. ծլում է  
հողի սոււած պարգեւի բոցի հետ միասին եւ նրա հետն էլ թա-

աամում, գնում: Դեռ մի լաւ նայիր, նայիր ու տես քէ ի՛նչ  
խօսք կեանքով եմ ապրում հողերը, լեռներ ու բլուրներ, դաշ-  
տեր ու մարգեր: Ասես կենդանի մեծ մի արարած՝ դողում է,  
սարսռում: Ասես սիրտ ձնի, որ այնտեղ տակը քնդում է,  
զարնում եւ երակներից մի սեւ արիւնի աղբիւրներ բշում:

### ՄԻԱՑՈՒՄ Է:

Տարիք առած մարդ, օր չի պատահում, որ է՛ն աշ-  
խարհից մի խաբար չ՛ուզեմ: Բայց նիշտը ասած, հողի  
անդնդից երբեք չեմ վախում... հենց հակառակը՝ ուզում եմ  
լինել նրա հետ մի մարմին. ծերացած սիրտս դնել սրտի բով  
մեծ այդ լուրճեան եւ ապրել նոր կեանք, անվերջ, անսահ-  
ման, կեանք ամբողջական... Դժուար է ասել...

### ԿՇՆՈՒՑ:

Դէ՛, քեւս բռնիր, գնանք մի տեսնենք... Այնտեղ  
ձորի մօտ տեսնո՞ւմ ես ծառը... Այն մեծ նոեանն ունի պատ-  
մութիւն շատ տարօրինակ, շա՛տ տարօրինակ...

Եղել է չի եղել...

### ՍԻՐԱԿՐԴ

Տէ՛ր իմ, Տէ՛ր իմ...  
մարգրիտները բլուրից ի վեր մագլցելով,  
ներմակ հագած շապիկներով,  
վազում եմ ո՛ւր...  
Ձեռքս սի՛ւսն է բռնել ամուր --  
չեմ հասկանում ի՛նչ է ուզում,  
ո՛ւր է կանչում:

Ծառերի վրայ ձիւն է եկել ծաղիկների  
եւ աստղերը վայր են իջել ու դաշտերի  
ծոցը ընկել՝  
գայնագոյն ծաղիկ:

Ամէն կողմից ձայն է գալիս  
բախում սրտիս:  
Կարծես մէկը ինձ է կանչում --  
կանչում է ինձ մէկը հեռում:

Տէ՛ր իմ, Տէ՛ր իմ, --  
այս ի՛նչ կախարդ օդ է այստեղ.  
ասես մէջս հուր եմ վառել՝ մեծ մի կանքեղ.  
ասես ես էլ նշեմու պէս  
մի վարդագոյն զգեստ եմ հագել --  
նշեմու պէս, նշեմու պէս...

### ԵՂՋԻԿԱՆԵՐ

— Երկինքը շինուած է ծաղիկներով լոյսերի...  
— Հովը անցաւ ինձ համբուրեց: Ինձ համբուրեց  
մի հով խելար:  
— Ինչո՞ւ քոյրեր, բողբոջները ծառերի լոյսով  
հիւսում նիւթերից՝ բայր են ընկում եւ փառագայթ...  
Ինչո՞ւ քոյրեր, բռնունների բոյներում՝ երկու  
ափով, բիւրեղացած հովը երգ է ժողովում եւ հոգուս մէջ  
սրտնջելով շառաչում:  
— Ահա ձայներ, ահա ձայներ. — ստուակների  
միամիտ կարկաչ.

1736-2008



տոսախների շրշուն հառաչ —  
աչֆերիս մէջ, կրծֆիս վրայ, մարմինիս մէջ  
հեւք եւն քափում փողփողենեջ  
ու երկնային երազներով ինձ շղթայում  
եւ բանտարկում մի անորոշ լուսեղ բանդում:

— Այսօր այստեղ  
օդը բիւրեղ  
քա՛գ է տալիս բուրներին...

— Թող տենդագին ձեռքերիս վրայ  
եւ սրտիս մէջ բաբախուն  
արեւն իր բաժակների  
աղամանդը շուտ պարպի  
եւ շրթերս հրկիզի...

— Ապրիլը մարգը հագցրեց ֆոլահեղծերով, մա-  
նիշակներով.

Ապրիլը օդը վառեց գոհարներով —  
բայց մեզ, ֆոյրեր, այս ապրիլը ի՞նչ տուաւ...

— Յո՛յս տուաւ:

— Անհուն տենչով մեզ լեցրեց:

— Մեր շրթերին վա՛րդ տուաւ:

— Մեր սրտերին քեւ տուաւ:

— Ապրիլը մեր յոյսերից, տենչանֆներից հիւսեց  
մի պսակ:

Ամէն մի սիրտ եղաւ առուակ.

ամէն հոգի վառեց կախարդ —

կախարդ մի կրակ:

— Աղջիկներ՝ փորձենք բախտը:

— Տեսնենք քախտը քագաւորի...  
— Հիւսենք պսակներ, դիզե՛նք անքիւ ծաղիկներ...  
— Այո դիզենք... բայց ո՞վ պիտի պսակենք:  
— Պա՛րը պիտի զարդարենք:

## ԵՐԿՈՒ ԵՂՋԻԿՆԵՐ

— Ա՛ն այս ծաղիկը. նա քոզ ֆեզ ասի իմ ան-  
հուն սէրը.

ու համբոյր տուր ինձ՝ քէ չէ կը մեռնեն նրա  
փերթերը:

— Սիրո՛ւմ եմ. սիրո՛ւն, մարմինդ դողդող, աչ-  
ֆերդ լուսէ:

— Մի հեզ աղաւնի կրծֆերիս պլլւած կամաց  
զարնում է բացուած քեւերը՝ փորձում է, փորձում...

— Երբ ես աստղերին աղօթֆ եմ ասում, ֆոյրիկ.  
ի՛մ ֆոյրիկ, ֆե՛զ եմ մտածում...

— Ուզում եմ չոֆել, ոտիկներդ համբուրել...

## ՈՒՐԻՇ ԵՂՋԻԿՆԵՐ

— Ոսկէ փերթերով հիւսուած այս ֆոյլ ո՞ւմ  
համար է:

— Քե՛զ համար:

— Համբոյր ու բոյր այդֆա՞ն... Շրթերդ բու-  
բաստանն ո՛ր քոյր մեղմատատան, գեղեցի՛կ այնֆան, ի՞նչ  
համար...

---

---

### ԱՐԻՎԱՐԴ ԵՒ ԵՂՋԻՎԱՆԵՐԸ

— Սիրվա՛րդ, մատերիդ պսպղացող ծայրերով այդ  
պսակը լոյսերի ո՞ր յոյսերի դրան առջեւ պիտի կախես:

### ԱՐԻՎԱՐԴ

Զգիտեմ...  
— Սիրվա՛րդ, աչքերիդ շողշող լնի ափերին ո՛ր  
հեռուն է սպասում...

### ԱՐԻՎԱՐԴ

Գիտեմ...  
— Սիրվա՛րդ, շրթերիդ մօտ մի երագ կարկանդ  
է կարմիր մի քաս:

### ԱՐԻՎԱՐԴ

Մի քա՞ն... Զեմ հասկանում...  
— Իսկ ես ահա հասկանում եմ:  
— Ե՛ս էլ լաւ եմ հասկանում:

### ԱՐԻՎԱՐԴ

Դէ՛, ասացէ՛ք, դէ, ասացէ՛ք... եքէ գիտէ՛ք...  
— Մեծ սնտառում կայ մի նամբայ... կայ մի  
նամբայ...

*Լն ջիւնսրը ծածաղորմ՝ ցն,  
Արովարդը կարմրորմ՝ է՛*

---

---

### ՄՃԱՆԵՐԿՈՂ

Այստեղ, խորհուրդն է սկսում:  
Աստուա՛ծ, յոյսերով դափնեպսակ՝ ինչֆա՛ն կար-  
միր են եւ գեղեցիկ են ինչֆան շրթունքներդ:  
Ամէն կողմում գաղտնածածուկ նշաններ կան՝  
գրուած բնութեան մեծ գրքի մէջ, ուր քեւածուն ամէն մի էջ  
աղբիւրի պէս աղամանդ է փշրում եւ արեւի համ-  
բոյրի տակ  
կայլակ կայլակ  
երգը տաւում ծնունդների:  
Լերան վրայ դանդաղ հօտը, արշալոյսի զանգակ-  
ների ղօղանջի հետ  
ման է գալիս  
արօտների մէջը ընկած երկնֆում:  
Հովիւների աչքերի մէջ հուր է վատուել:  
Այստեղ խորհուրդն է սկսում:

### ԵՐԻՇԱԿՐԻՇ

Բարե՛ւ, Սիրվարդ :  
Անմեղ  
Կանթեղ  
դաշտում ժուարթ .  
պայծառ աչքեր  
սիրուն շրթեր  
ունես :  
Սիրվա՛րդ —  
դու վարդ հրակեզ,  
թող որ նայիմ, պաշտեմ ես քեզ :

### ՍԻՐՎԱԿՐԻ

Ես քեզ երբեք հորս տանը,  
մեր գիւղի մէջ, եկեղեցում —  
եւ քեզ երբեք ոչ մի վայրում  
հանդիպել չեմ . . .

### ԵՐԻՇԱԿՐԻՇ

Ես մի անցորդ եմ :  
Եւ այս երկրից եմ  
եւ ո՛չ այս երկրից :  
Դալար դաշտերից, բարձր լեռներից  
անցնում եմ գնում եւ նորից գալիս :  
Երբ սպիտակադէմ մայր մեր գարունը  
եռում գեռում է, վառում անհունը՝  
եւ աղօթագին ֆամբայ եմ ընկնում ,

ցնորհների երկրում երագներ հիւսում  
եւ կածաններով անյայտ աշխարհի  
ստաջանում եմ իմ աննպատակ նպատակներին :

Ես մի անցորդ եմ, միայն մի անցորդ :

Երբ սուրբ շրշուկով երկինք ու երկիր  
իմ յստակ ձայնիս նոր ձայն են տալիս՝  
անհուն ցանկութեամբ լեցնում են հոգիս —  
խոնարհ եւ հլու,  
եւ պարզ օրհներգու,  
չոփում եմ այստեղ, փարում եմ հողին  
եւ լալով պլլում՝ լալով, ծիծաղով՝  
իմ երագներին պայծառ պատկերին :

Ես մի անցորդ եմ, միայն մի անցորդ :

### ՍԻՐՎԱԿՐԻ

Ես չեմ հասկանում . . . Մեր գիւղից այն կողմ  
երբեք չեմ եղած :

### ԵՐԻՇԱԿՐԻՇ

Իսկ ես՝  
կանգնել եմ դիրքում :  
Աչքերդ թաշեայ այնքա՛ն հմայիչ  
աղօթփներ ունեն  
ու սիրտդ ծածուկ  
ունի գաղտնիքներ  
այնպիսի հրավառ,

որ ես  
կանգնել եմ դիւրուած  
եւ սիրահարուած :

*Առքերու մ'ւր նայելով :*

Ունի՞ք թէ չունի...

### ԱՌՐԱՅՐԴ

Ինչ տարօրինակ բաներ ես ասում...

### ԵՐԻՄԱՅՐԻՇ

Ունի՞ք թէ չունի :  
Մի յոյս տուր միայն,  
ասիր ինձ մի խօսք :

### ԱՌՐԱՅՐԴ

Ես ի՞նչ իմանամ... Ժամանակ չունեմ,  
չե՛մ կարող սպասել : Դեպի այն կողմը  
պէտք է որ գնամ :

*Մտածանալով :*

Ասեմ քեզ մի բա՛ն...  
Այնտեղ, կարկաչուն մեծ առուակի մօտ  
կայ մի ծառ հերմակ, ծաղկազարդ դադուն  
ինչպէս նորահարս...  
Ասեմ քեզ մի բա՛ն...  
Այն հերմակ ծառը իմ սրտիս ծառն է :

*Ուղու մ' է գնալ :*

### ԵՐԻՄԱՅՐԻՇ

Գա՛մ, տեսնե՛մ...  
Ծառը դողդողուն  
սրտիդ՝  
սիրե՛մ...

### ԱՌՐԱՅՐԴ

Հետս գաս այնտե՞ղ :

### ԵՐԻՄԱՅՐԻՇ

Եթէ որ ուզես...

### ԱՌՐԱՅՐԴ

Ե՛կ : *Չորս կողմ՝ նայելուց յետոյ :*



### ՄԵՆՏԵՐԳՈՂ

Կեանքը գարուն է :  
Լոյս՝ խօսի՛ր ծաղիկների ձայներով :  
Գարունն է կեանքը :  
Սէ՛ր՝ երգիր բիրախորհուրդ յոյգերով :  
Կեանքը գարուն է :

## ՏՈՎԵՐԻ ՉԱՅՆԸ


Խոտերի մէջ  
սէր ու տեմչ  
լոյս են հնձում  
շնչացող մանգաղներով:

## ԺԱՂԻՎՆԵՐԻ ՉԱՅՆԸ

Մեղուների աչքերում  
հուր է վառում:

## ԲՈՒՐ ՉԱՅՆԵՐԸ

Գարո՛ւն, գարո՛ւն:



## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍՏՈՒԱԾ ԹԵՒԱԻՈՐ Է,  
ՈՐՈՎՏԵՄԵՒ ՍԷՐԸ ՏՈԳԻ-  
ՆԵՐԻՆ ԹԵՒԵՐ Է ԺԱԼԻԱ.  
ԵՒ ՆԵՄԻ ՆԱԹՆ ԱՐԱԳԵ-  
ՏԱ Է ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՆՐԱ  
ՆԱԹՆ ԱՆՈՂՈՔ.

Էմանուէլ է:

դէպի սրբինք մագլցող, խորա-  
տարած եւ սաղարթաօր աճառի  
ամառն է:

Կանանք բոցերի կենդանի հրոճ  
եւ ոգիների թաքնաթաքուր խաղ-  
ժայթքող սերմերի աղաղակ՝ աշխ-  
բող թաթափութեան, ու խեղճ զրկա-  
նառնութիւն՝ արեւի աշրող համբոյր-  
ների ժապ:

Քնուածան մայր եկեղեցու նախ-  
է անառնք ուր տաճարագ է խառ-  
ճախների՝ օճուած արփապատ սրբու-  
թաններով եւ ճաշկանայն ճնշանե-  
րով:

---

---

### ՄԵՆՏՐԳՈՂ

Լոյսը՝

աշխարհից աշխարհ համբոյր հրկիզուած, երկրին  
պլլուած աղամանդ օճեր, բագաւոր սատղի մոլեգին բերեր —

Վիքիտարի մի սէր —

իր յեղագեղուն հսկայ սափորից արծաթ է բախում  
եւ լալ եւ փաւրօզ —

բոցէ մատներով նոր կեանք է հիւսում :  
Նոսցող նիւթը սպասում է նրան, որպէս զի դառ-  
նայ ծաղի՛կ մեղմաբոյր, բողբո՛ջ ոսկեփանդ,  
կենսաբեր խօլ խանդ, —  
հրդե՛հ սիրային :

Արե՛ւ, վե՛հ արեւ, դու բարունապետ բոլոր  
աստղերի,  
նախախնամական վառ սիրտ աշխարհի,  
նառագայթների լուսերգող փնար, նանանչող  
մեծ սար,  
ու յոնարի նայուածք՝  
սուրբ միջատների աչքերին փարած —  
աղբի՛ւր եւ Աստուած :  
Օրհնի՛ր մեզ Աստուած :  
Օրհնի՛ր մեզ Աստուած, որպէս զի լինենք քեւերիդ  
նման՝ օղով հարբեցած, լոյսով խենդացած,  
որպէս զի լինենք քեւերիդ նման  
նախք աննման  
եւ լուսակենդան :

---

---

### ՆՄՈՒՆԻ ԵՐԿՆՅՈՒՆ

Փառաբանե՛նք, փառաբանե՛նք ծնծղաները լոյսերի  
եւ կայծկլտող հովերի  
Բուրումնաւէտ վագրը, մէջը տերեւների :

Ահա բուրվառ, խունկ եւ ածուխ  
Փարփառ բարտիների մէջ վառ,  
Պտուղները հրդեհացած  
Տարփանքների  
Եւ խարշափը խորհրդաբեր  
Սէր պաղատող ձայների :

Փառաբանե՛նք, փառաբանե՛նք նանանչները  
Որ աղբիւր են յոյգերի —  
Նետե՛ր խոցուած ծաղիկների բաժակներին,  
Բոցե՛ր քառած վարագների աչքերում  
Եւ կոււմ-կոււմ  
Ըմպած մեղր հեշտանքների :

Ահա դողդող կանթեղները հիւղերի —  
Ամա՛ն է, ամա՛ն է —  
Ահա կրակը մեզ պաշարող երկնքի —

Ամա՛ն է, ամա՛ն է —  
Ահա յոյսը եւ համբոյրը .  
Կաղնիների կանանչ — կանանչ, սարսուռն խոյրը —  
Ամա՛ն է, ամա՛ն է :

Փառաբանե՛նք, փառաբանե՛նք նախքը կարմիր  
տենդերի .

Սրենք սուրը սէրերի,  
Լսենք, լսենք,  
Հողը այրող ոտնաձայնը պայերի :

## ՄՇՆՆԵՐԿՈՂ

Բոսորագոյն եզնակների շուրջը ընկած՝  
վիք ու ջեյրան  
վառ սերմերի հոտն են առնում  
ու բարձրաձայն տառապում:  
Օղը հարբած  
տերեւների ջերմն է ըմպում:

*Յանկարս, անտառի խորքում ձայ-  
նոր են ատում, անտառ է գոռոթգոռում,  
ու աւերներն նման ծխախոտի ցա-  
րաստում են արեւնացած անտառի  
հենցող աղմուկի հետ:*

*Շատ հեռուում, սուր մի սուտոցի  
ձայն է ատում ցե անմեղապէս ան-  
հետանում: լոռութիւն:*

*Լեզու նորոց կանչ ու կտուր, գոռ-  
ջերմէք բաւում են, միանում, ւեց-  
նում մեծ մի կայնաստեղծ անտա-  
ռի մօտակայ կայրեր:*

*Ոգնները խաղում են:*

## ՊԵՌՄԻ ԿԻՆԸ

Վա՛տ արարածներ, սրիկանե՛ր, հետապնդում էք  
ինձ ինչպէս մի գայլ...

## ՆՈՒՆԶՈՄՆԵՐ

— Տեսէ՛ք, պտուղը այստեղ է, այստեղ է...  
Հոտոտում է գետինը գարեուրերի իր քիթով...

## ՊԵՌՄԻ

Օգնութի՛ւն, օգնութի՛ւն... Ա՛հ, սակալի արա-  
բածներ, երբե՛ն ի վեր անտառը ինձ քշումացաւ... Ես չե՞մ  
արդեօք գաղտնիքները, շշուկները իմացոյ, լուսնին կախարդ  
խօսեր ասոյ, խաղ խաղացոյ...

## ՆՈՒՆԶՈՄՆԵՐ

— Հօ՛, հօ՛, հօ՛...  
— Հի՛, հի՛, հի՛...  
— Ասում էիր երգել գիտես...  
— Ասում էիր պարել գիտես...

## ՊԵՌՄԻ

Գիտե՛մ, գիտե՛մ երգ ու ծափ... ցանած սատալի ու  
պար՛ բարբախոյ սար... Տուէ՛ք կապոց աչքերիս ու ոտերիս  
մագիլներ մառագայթի...

## ՆՈՒՆԶՈՄՆԵՐ

— Տանք քեզ հիւքը նիւքերի...  
— Տանք քեզ քոյնը օձերի...  
— Շշուկը հովերի, ծնծղաները պայերի ու մի  
նետ-մառագայթ, որ լինի խայթ...

## ԳՆՈՒՆԻՇ

(Ուղեցույ հաճութեւս):

Տուէ՛ք շուտ ինձ բուի մի աչք, գայլի մի քար եւ լուսնոյ կար. ես գուշակեմ, երգեմ, երգեմ խարշափի հետ անտառի քաֆնաքաֆուր խօսքը յոյզի, պա՛րը ասեմ կիր-  
ֆերի...

## ՆՈՒԱԶՈՄՆԵՐ

- Դէ՛ երգիր...
- Զի՛ կարող:
- Լուսի՛նն՝ քող երգի:

*Պատա՛ւը յորձու՛մ է ցրցել, բայց  
կատու՛ն մ՛լատոցն նման ձայնը է  
արձակու՛մ:*

- Տա, տա, տա... վայրի կատու...
- Կոյր բու...
- Մոռո՛ւ, մոռո՛ւ, մոռո՛ւ...

## ԳՆՈՒՆԻՇ

(գ. ց. հնե յ. ո. ու. ց. ու. ու. ց.):

Զե՛մ գնում... բարտիները քող ձայնեն, պաշտ-  
պանեն... Ես ի՞նչ եմ որ. ես պարպուած եւ չորացած արգան-  
դով մի մայր եմ խեղն. — չեմ գնում, չեմ գնում...

*Հոռու՛մ բարտներն շնչոց:*

## ՆՈՒԱԶՈՄՆԵՐ

- Լուսի՛նն, լուսի՛նն...
- Ի՞նչ պատահեց:

- Վարագայ լեռներից Դեւն է իջնում:
- Փախի՛ր կին, քէ չէ կորար...

*Կնե՛ր զքո է կնե՛րու՛մ ցո՛ւ չափ յառ-  
ջու՛մ: Նողագործները հե՛րապնդու՛մ  
են նրան:*

*Կնե՛րա՛ն մ՛ւլ, ճե՛ղքը կորցնու՛յ,  
ոտքո՛ն հողը նման մ՛ն ձայն է առա-  
ջանու՛մ:*

## ԵՐԿՈՒ ԳՆՅԵՐ

— Սօսիների վրայ քառած կանանչ աչքերով ծա-  
ռանոյշները երգեցին՝ երբ նա անցաւ:

— Լեռից լեռ ձայներ կարկաչեցին:

— Զե՛ս լսում, ամէն ինչ սրսրփում է ուռիի տե-  
րեւների նման եւ արեւը բոցեղ իր քայլերը հողին է զարնում:

— Մի ինչ որ բան ինձ ննչում է: Զեմ հասկանում,  
սօ՛ք է, ինչ է...

— Ես գգում եմ... ռնգերիս մէջ բոց է նստել ու  
կենդանի մտերի բոյր է քառել...

— Փնտտե՛նք:

— Փնտտե՛նք:

## ԱՆՄԱՌԻ ՆՐԳՆՆԵՐԸ ՆԻ ԴՆԻԸ

ԿՆՄԱՌԸ ԽՈՒՆՈՐԷՆ ԳՂԳՂՈՒՄ Է:

— Երբ նա իջաւ,  
Առուակները լեռների երգեցին  
Բիրենդ ձայնով,  
Ինչպէս ոսկեայ գանգակներ.  
Ու հով անցաւ՝  
Երբ նա իջաւ:

— Երբ նա անցաւ  
Տատան ծովից ցորենների  
Ու քեւերը իր շարժեց՝  
— Լոյսեր ելան ամէն կողմից.  
Հարսնուկները բարձրացան,  
Ինչպէս վառուած կարմիր նրագներ.  
Ու նախքան անկարելի թիթեռնիկներ:

## ԴՆԻԸ

Լեռան վրայ վարագայ  
Փչեցի փողը հսկայ բոլոր գաղտնի ձայների՝  
որ երկիրը դղրդայ, լինի համբոյր յոյսով հա-  
սուն նիւթերի:

Լինի՛, լինի՛ —

ծաղկած լի ու պոռկայ

Լուռ կեանքների սերմը մրափած:

Ու ահա, մինչ արթնցաւ ամէն ինչ, ամբողջական

ծիծաղի մէջ տիեզերքի՛ ես ապրեցի:

## ԺՆՈՒՆՈՅՇԱՆՈՐ

Ճիւղերի տակ էգ եղնիկներ  
Ո՞ւմ են այդպէս սպասում...  
Ճիւղը նիւղ է փաթթել, գրկել —  
Ծառն էլ սերմ է սպասում:

## ԴՆԻԸ

Հէ՛, կի՛ն՝ բնութիւն... Արար աշխարհ, բազուկ-  
ներիս ծայրից կախուած ազատութիւն:

Նկայ, հասայ

ու հողերի շրթունքների տակ տառապող

հոգիս բացուեց,

ինչպէս ծաղիկ մի հսկայ,

հրեղէն քոչուսն եւ արծաթէ գերանդի:

Ե՛ս եմ արմատ, անում եւ ծառ:

Ցնցուած մարմին, տենդոտ արիւն եւ հուր  
նայուածք՝ գայլի, մարդի, վայրի խոզի, վարդենիի — Ե՛ս եմ:

Ես պար եմ խօլ եւ մոնչիւն վայրենի եւ աղաղակ

յաղթական

եւ մեղմաբոյր համբոյր

բերնից բերան

եւ բաժակից նոր բաժակ:

հոտերի մէջ քաւալուող հով,

գինի, գեփիւռ եւ սուտակ,

արիւն եւ ծով —

Երակներին մրրիկների հետը վազող  
ալիք եմ ես:

Հէ՛, կին՝ բնութի՛ւն —

Եկայ, հասայ:

Երէկ փակուած անապատում —

Սարտարապատում —

այսօր երագ, սուրող աւիւն, վեհ խենդութիւն —  
Ե՛ս եմ բնութիւն:

Ահաւասիկ կարմիր սուտակ՝

Արագածի նեղուած գլխից ֆաղուած, բերած.

ահաւասիկ քանձր սատափ՝

ափ ափ ժողուած վեհ Գեղամայ լեռան կրճէից.

մի բուն գմբուխտ՝ Սիփանայ ջերմ հողի սրտից.

մի բուն ցորեն՝ Շիրակայ լուռ մեծ դաշտերից —

քող լինի տօ՛ն, լինի երագ,

երգը հնչի, սրինգ ու քմբուկ զարնեն, զարնեն.

պայերը քող զուգաւորուեն —

որովհետեւ ահաւասիկ՝

երբ արեւը քարձրանում է Գեւը առաջանում է:

### ԺԱՌԱՅՈՒՅՆՆԵՐ

— Էգ եղիկներ՝ սիրահարներ՝:

— ձիւղը նիւղ է փաթթել, գրկել...

### ՊԵՌՄԻ ԿԻՆԸ

*Յարգելող եւ կառարկան ձեռ-  
բող ներս է մտնում, ու շուրջը ԳՏԵՐ  
է նկարում, նշաններ անում, կարծես  
մեզն է կանչում ու առաջնորդում...*

*Շուրջը օձերը սուտում են:*

Ազջիկս ե՛կ, մանկիկս ե՛կ... Հի, հի, հի... հօ,  
հօ, հօ... այս կողմ, այս կողմ...

Կարմիր հիւրիկս, մաքուր ազջիկս, ներմակ կոյ-  
սիկս... այս կողմ, այս կողմ...

Հի, հի, հի... հօ, հօ, հօ...

Պիտի կատարուի՛, պիտի կատարուի՛... անտար-  
դողայ, արեւը խնդայ... լաւիկ կոյսիկս, սիրուն ազջիկս:

Պիտի կատարուի՛, պիտի կատարուի՛...

### ԱՐԿԱՐԴ

Խնդրում եմ, խնդրում, այստեղ կանգ առնենք...  
վախում եմ, ինչո՞ւ, ես էլ չգիտեմ: Ասես գաղտնագող ձայ-  
ներ են սողում... Ես էլ այրում եմ, ինչո՞ւ — չգիտեմ...

### ԵՐԻՄԵԱՆԵՐԷ

Տուր ինձ շուրթերդ, մարմինդ տուր ինձ. լինեմ  
խօլ բաղեղ փաթաթուած ծառիդ, ու հեւքդ ըմպեմ տենդոտ  
բերանով...

*Շարասրենգի ձայն:*

### ԱՐԿԱՐԴ

Մի՛ ասիր այդպէս... Աստուած իմ, Աստուած, ես ի՛նչպէս անեմ... Աչքերդ վառ են. ձեռքերդ կրակ...

### ԵՐԻՄԱՆՐԴԸ

Աստուած այստեղ է, ներկա՛յ է Աստուած: Կանանչ անտառի կանանչ քեւերում նա փաթարուել է եւ մեզ է սպասում: Նա մրտենիի բոցեղ մացառից մեզ բոյր է բոքում ու բարտիների շողշողուն լոյսով սարսուռ տարածում:

### ԱՐԿԱՐԴ

Նա մեզ այցելեց եւ վիրաւորեց անուշ մի նետով, լուսեղ մի սուրով... Նա մեզ այցելեց...

### ԵՐԻՄԱՆՐԴԸ

Ա՛հ, ձեռքդ կակուղ... տո՛ւր ձեռքդ կակուղ, բող պլլուեմ կուրծքիդ, առնեմ քո մորթիդ քրքմաբոյր հոտը ու վարսերիդ մէջ բոյրը անտառի, բոյրը բոյսերի...

Տամ քեզ իմ սիրտը՝ վարդի պէս վառուի կուրծքդ դողահար. նայուածքս տամ քեզ ու բող նա լինի կիսամերկ մարմնիդ բոցեղ պատմունան...

### ԱՐԿԱՐԴ

Գլուխս դառնում է, ինչպէս տենդագին աշխատող փեթակ:

### ԵՐԻՄԱՆՐԴԸ

Հարբած մեղուներ Բէնգալի վարդի համբոյրն են խմում ու ծաղիկներին բռնունն է երգում... Օ՛ իմ սիրական, եղիբ պարզ աղբիւր, լուսատու արե՛ւ. եկ բանամ գօտիդ՝ օդ լինեմք ու երգ, լո՛յս լինեմք ու կրակ: Եկ բանամ գօտիդ...

### ԱՐԿԱՐԴ

Այդպէս մի՛ խօսիր... այդպէս մի՛ գրկիր...

### ԵՐԻՄԱՆՐԴԸ

Պէտք է որ լինի... պէտք է կատարուի՛ օրէնքը կեանքի... Տուր ինձ քեւերդ ու գնանք, գնանք երազի անյայտ աշխարհում լինեմք միացած մի՛ հոգի, լինեմք մի՛ մարմին:

Ես քեզ ուզում եմ, ինչպէ՛ս եմ ուզում. ես քեզ սիրում եմ, ինչպէ՛ս եմ սիրում...

### ԱՐԿԱՐԴ

Այդպէս մի՛ խօսիր, այդպէս մի՛ գրկիր... երա՛զ է, երա՛զ...

### ԵՐԻՄԱՆՐԴԸ

Լուս գիշերուայ մէջ լսե՞լ ես երբեք կարկաչը ջուրի. — ես այդ կարկաչն եմ: Կամ առաւօտեան, լեռների վրայ երբ ֆոլ է իջնում, հիւսուած արեւի հագար գոյներով, երգուած ծառերի խուլ շշնջիւնով — նայի՛ր աչքերիս, ուզում

եմ ծածկել մարմինդ փղոսկրէ նոր արշալոյսով եւ տալ քեզ մի քագ որի նմանը ոչ ոք չի տեսել :

Ո՛ր իմ քագուհի, չճնաղ աչքերիդ լոյսերը տուր ինձ եւ բաց դուռերը քո վեհ պալատիդ, որպէս զի երգեմ անտառում լսած առաջին երգս ու փառաբանեմ մեր սէրը անմահ :

### ԱՐԿԱՆԻ

Ինչե՛ր ես ասում... ինչպէ՛ս ես ասում...

### ՆՐԻՇԱՆԱՆԵՐԷ

Մենք ի՞նչ ենք հիմա — լուկ մի ցանկութիւն հարբած անտառի ծածուկ գիւնիով... Եկ քեզ համբուրեմ, գրկե՛մ քեզ ամուր, ու լինենք ինչպէս մի վառ աշտարակ կանգնած տանարի խորհուրդին առջեւ, ու լինենք տեսիլք արեւով սնած . . .

Եկ քեզ համբուրեմ... այդպէս, ա՛հ, այդպէս...

### ԱՐԿԱՆԻ

Ա՛ն... հոգիս... ա՛ն...

---

---

### ԸՆՏՐՆՈՒ ՌԳՐՆԵՐԸ

— Խենդեցած եղնիկները հետքն են փնտռում էգերի . . .

— Կոյտ-կոյտ պլլուած օճերը կանգ են առել պոչերի վրայ՝ կատաղած :

— Սիրահարուած միջատները ամբուլներից քայն են քաղում ու վարդերի սիրտը ծամում :

— Ճպուռների հունչոցը տալիղներ են հեշտանփի...

### ՄՈՍՆԵՐԿՈՂ

Սէր եւ Մահ,

գոհ եւ գոհարար —

տեսիլքի պատարագ ուր արիւնն է գիւնի

եւ մարմինը հա՛ց համեղ եւ մաքուր՝

աղբիւր քաճաքաքաճուր,

վառ լինելիութիւն —

նախախնամութիւն :

Սէր եւ Մահ —

օղակ օղակի հետ՝ շղթայ

բիւր տեսիլքների, մարմնացումների

ծաղի՛կ ցաւի

ու տառապող անմահութիւն :

Սէր եւ Մահ — նախախնամութիւն :

Արիւնի մէջ հոսացող

ծնունդ է խմորում

եւ մահը՝ արիւն :

Ամենամե՛ծ Աստուած, սոսկալի տօնի մէջ այսօրուայ անողորմ օրէնքդ քեքե՛ւ քոյ լինի :

ԼճՆԵՐԻ ՉՈՐԱ ԿՈՂՄԻՅ ԿՈՂՄԻՅ ԿՈՂՄԻՅ  
ՆԵՐ, ՏԻՃԱՂՆԵՐ, ԿԱՆՉԵՐ ԵՒ ԵՐԲԵՄՆ ԵՒ  
ԽՈՒՆ ՀԵՏԿԼԵՐԱՆՔՆԵՐ ԵՆ ԼԱՌՈՒՄ՝:

ՆՈՒՆԱՂՈՒՄՆԵՐ, ՊԱՅԵՐ ԵՒ ՈՒՐԻՆ  
ՈՒՄՆԵՐ ՎԱՊՎՂՈՒՄ ԵՆ ԱՄՔԵՆ ԿՈՂՄ՝, ԻՆՉ  
ՈՐ ՄԻ ԲԱՆ ՈՐՈՆԵՆՈՎ: ԾՊՈՒՆԵՐԻ ՄԱԿ  
ՏԱՆՐԱԿԱՆԿԱՂ ՀՈՒՔԵՐ ԵՆ ՆԵՐՆՈՒՄ՝:

### ՉԵՑՆԵՐ

- Դե՛ւ, Դե՛ւ, Դե՛ւ...
- Օ՛ հեշտանֆ, օ՛ հեշտանֆ...
- Աղբիւրները տառապում են, բեղմնավորչին ծաղիկների կուրծքն է այրում:
- Լեռների մունջ աստուածները պլլուել են հողերին:
- Դեւը խենդացած քաւալ է գալիս:
- Ա՛յ, ա՛յ, բագուկներէս բոց է ընկնում...
- Քա՛ղցր է միսը. ախաներս արիւնել են...
- Օ՛ հեշտանֆ, օ՛ հեշտանֆ...

### ԳՆՈՒՄԻ ԿԻՆԸ

- ձերմակ աղանին պատմութիւն ունէր, երագներ ունէր —  
այլեւս չունի՛:
- ձերմակ աղանին փետուրներ ունէր, լայն քեւեր ունէր —  
այլեւս չունի՛:

Հի՛, հի՛, հի՛... հօ՛, հօ՛, հօ՛...  
Հէ՛, հէ՛, նոխագոտներ, եղբայրներ, եկէ՛ք,  
չուտ եկէ՛ք...

### ՄԻ ԳԼՅ

(ՀՏԵՐԱԳՈՆԿՆԵՆՈՎ ՄԻ ՏԱՌԱՆՈՅԷ):

Ահա եկայ, սպասիր, սպասիր... զիտերդ ինչպէ՛ս են երերում, կուրծքերդ ինչպէ՛ս են դողդողում: Մի՛ փախչիր, քող, քող ծիծերդ խածնեմ, հարբե՛մ, քող հարբեմ...

### ԹԻՌԵՐՆԵՐԿՆԵՐ

(ՄԷԿ ՄՔԿԻ ՀՏԵՐԱԳՈՆԿՆԵՆՈՎ):

- Մրտենի մօտն էր քառած. երբ նրան տեսայ:
- Մի ժամ ապրեմ՝ սիրե՛մ, սիրե՛մ:
- Բոյրը, գոյնը, ա՛հ գոյնը նրան...
- Եկայ, եկայ, եկայ, եկայ...

ԿՈՃՂՏՐԻ ՄԻՋԱՄՆԵՐԸ ՉԱՐՆՈՒՄ ԵՆ.  
ՄԱԿ, ՄԱԿ, ՄԱԿ, ՄԱԿ:

### ՉԵՑՆԵՐԸ

- Մի համբոյր մի քիչ արիւն — պա՛ր:
- Թող տեւի  
լոյս ու կրակը արիւնի,  
քող լցուի  
սուրբ սափորը բագինի:

— Տաւիդ եւ վին թող հնչեն :

— Ո՛ր գալարուն թեւերի մէջ յայգերի  
թեւածումը այս սոսկալի...

— Սերմը սերմի ետկից վագող՝  
տառապագին դող  
մարմինների :

— Սրսքիում է սրինգը  
մեղրածորան ձայներով,  
ծլարձակման սրինգը  
ողբերգութեան արիւնով :

Ու ոսկեհեռ սափորը  
տիեզերական խօլ կամֆի  
աստուածների նոր շնորհը,  
փոխում է վառ խարոյկի :

— Լսո՞ւմ է՞ Դեւը .  
նրա աչքերից բոցեր են ցատկում .  
լսո՞ւմ է՞ Դեւը —  
նրա բերանից փրփուր է թափում :

### ՄԻ ԺԱՌԱՅՈՒՄ

Արծաթ նետերով ինձ վիրաւորեց արեւը փարփառ :

### ՄԻ ՈՒՐԻՇԸ

Ա՛ն, անտառ, բուռ-բուռ արիւնս ա՛ն...

### ՄԻ ՈՒՐԻՇԸ

Դե՛ւը, Դե՛ւը...

### ՄԵՆՆԵՐԿՈՂ

Դեւը զուգուեց :

Սարսուռ է աշխարհը բովանդակ :

Լուռ է Աստուած :

### ՊԵՌՆԻ ԿԻՆԸ

Հիմա տեսա՞ք — ես պարեցի եւ երգեցի :

Հիմա տեսա՞ք...

*Հեռու-եց եկող մի հողի հետ ան-  
տառ-ը սկսում է երգել :*

*Երբ-տառար-ը մտածեց Նստած  
հեռու-ն է նայում, մինչ Սերպար-ը՝  
վարսերը երեսի վրայ թափուած, ԿԵՍ  
մերձ հեծկւոր-ը է :*

*Մօլեցող որոտում :*

### ՆԱՄԱՌԻ ԵՐԿԵՆՈՒՄ

Լսի՛ր, լսի՛ր, քամիներն են վշտագին  
հոր անտառի կաղնիները պատուեցին :

Լսի՛ր, լսի՛ր, որսարդներն են կատաղի  
Ձիարշաւում աղաղակով սոսկալի :

Կամ մի փող է մեզ անծանօթ սապտի  
Հեծկւորում :

Կամ մի ձայն է շատ բարկացած Աստուծոյ  
Որոտում :

Մեռելների ձայներն են որ անցնում են  
Զայրանում են, բողոքում են :  
Որսորդներն են մեր բախտի ,  
Մեր ահաբեր , լալաբրթիւ ծիծաղի :

Մաղիկներն են շշնջում .

— Իսկ օձերը —  
Փաթբում , ծալում , կանչում , տնփում  
Ու ահաբեր՝

Ոսկեզմբուխտ ոգիները սպասում :  
— Իսկ օձերը —

Բայց այն ո՞վ է , բայց այն ո՞վ է հեծկլտում :

Անտառի մէջ սաղարթախիթ խորհուրդի  
Հրեղէն ձին է սանձարձակ  
Կատաղում բոցակրակ —  
Նա՛ է ասում , գաղտնիքները նախագգում ,  
Նա է ֆանդում , աւերում . . .

Բայց այն ո՞վ է , բայց այն ո՞վ է հեծկլտում :

Լսի՛ր , լսի՛ր , ֆամինե՞րն են վշտագին  
Արեւմուտփի կաղնիները պատռեցին :  
Լսի՛ր , լսի՛ր , որսորդներն են կատաղի  
Հետապնդում ստուերները դեւերի :

*Վորտորիկ :*

## ՊԵՌՄԻ ԿԻՆԸ

(Կա՛րաղած եւ հրեցայինն :)

Անիծեա՛լ տանար , մահաբե՛ր տանար :

Անտա՛ն — մա՛հ , մա՛հ :

Գիտե՛մ , գիտե՛մ —

Արեւը պիտի մարի , ծառերը պիտի մեռնեն եւ այն  
ժամանակ — գիտե՛մ , գիտե՛մ — ֆարերը պիտի գուգուեն :  
Եւ ե՛ս , եւ ե՛ս . . .

*Մինչ Վորտորիկը սաստկանում է ,  
Նա սգոում է Պարբել :*

## ՄԵՆՆԵՐԳՈՂ

Արիւնի վառ կաթիլներից՝  
Կեա՛նք է ծնում ,  
Իսկ կեանքերի հրդեհումից՝  
մա՛հ է ծնում —

ԱՅՍ Է ՕՐԷՆՔԸ :

# Մ ԿԱՆ ԵՐՐՈՐԴ

ԿԱՄՈՒԿԹ ՎԻՐԱԿՈՐ Է.  
ԻՐ ՎԵՐՔԸ ՍՈՒՄԱԿ Է՝ ՈՐ  
ՎԱՌՈՒՄ Է ԿՇԱՆԱՅԻՆ  
ՆՈՒՄԸ:

Լէոն է:

Անլամ աղձոս, գրեթէ մտուալին  
դաւնապութիւն՝ նոտագատորուած ան-  
դարձութիւն մտուալութիւն:

Հոտութիւն ոսկեղօս ու միայնակ  
անտառ:

Վարսուրը երեսն թափած, մեղմ  
մի տրամութիւն՝ ճնշող քայլերով  
ման է գալիս դաւանակարի մէջ:  
Լնյայտ արքայի խորէ եւ հեզկարուն  
հնչիւնները ներուտորէն թրթռում են  
եւ յոսանալով մտնում:

Լէոն է. ոսկե մտուալութիւն:

### ՆՐԿՈՒ ՊԵՌՆԻ ԿՐՆԵՐ

- Նորից մի աշուն, դրացի...
- Տխուր մի աշուն... շատ տխուր մի աշուն...
- Ծառերը հառաչում են ու մեռնում:
- Ասում է. ամէն բան պիտի մեռնի, ամէն բան...
- Ու պիտի հասնի մի օր երբ մեկ էլ եւս պիտի  
մեռնենք:

— Շուտո՛վ, շուտո՛վ...

— Սուրբ Աստուածածինը, Կոյսը անարատ մեզ լինի պաշտպան...

— Աստուած պաշտպանում է առաքիւնիներին եւ արդարներին: Վերջին դատաստանին նա չպիտի ների, չէ՛, չէ՛, դրացի, նա չպիտի ների... Աղջիկներ կան, որ դժոխքի կրակների մէջ պիտի այրուեն... Իմացա՛ր նորութիւնը...

— Ի՛նչ նորութիւն, դրացի:

— Անտառապահի աղջիկը մը օտարի հետ...

*Լիւանջնն յօփսոմ է:*

Խեղճ մայրը տեսնէիր...

— Ի՛նչ ամօք...

*Խոնկ ձեռքերը կճկում՝ ցն կոճք՝  
դրայ եւ ցրտում:*

— Ամօ՛ք, այո՛, ամօ՛ք... Այդպիսի աղջիկների առջեւ եկեղեցու դուռը պէտք է որ փակե՛ն:

— Բա, չփակե՞ն... բա, չփակե՞ն...

— Հայրը տունից դուրս է վռնդել:

— Շատ լաւ է արեւ... բա, չվռնդի՛ր, բա, չվռնդի՛ր...

*Լուսնուն:*

— Փառք Աստուծոյ, դրացի, պատուով ապրեցինք:

— Պատուով, արուռով, խոնարհ ապրեցինք:

— Սուրբ Կարապետը մեզ պաշտպան լինի:

— Սուրբ Աստուածածինը... Մայր մեր Մարիամը...

*Նորից ցրտում՝ ցն, հնչում արաջ:*

— Նորից մի աշուն, դրացի:

— Շատ տխուր, շատ տխուր մի աշուն...

— Տերեւները քառամում են... մեռնում...

**ՄԱՆՏԵՐԿՈՂ**

...Թրքուն շուքերի մէջ, լոյսերը դժգոյն ոսկիների արցունքներ են լալիս...

**ՏԵՐԿՈՒ ԵՂՋ ԻՎՆՏԵՐ**

— Ու պարտեզի մէջ, մեծ վարդենիի տակ, նա իր սէրը ինձ յայտնեց...

— Իսկ վարդենին սարսե՞ց...

— Կուրծքս դողում էր, սիրտս կծկուել էր... Եւ նա՛ դժգոյն էր, տենդոտ...

— Դժգո՞յն էր... տխուր էր...

— Տխուր էր, այո... Տխու՛ր է սէրը: Ինչո՞ւ տխուր է սէրը՝ ոչ ոք կարող է ասել: Սպասում ես, ցանկանում ես, երազում ես գիշերներում երկայն եւ ահա որ, գալիս է մի ցաւ քաղցր, տրտում աչքերով նայում է, նայում ու սիրտդ կծկում:

— Շուտո՛վ, շուտո՛վ...

— Սուրբ Աստուածածինը, Կոյսը անարատ մեզ լինի պաշտպան...

— Աստուած պաշտպանում է առաքինիներին եւ արդարներին: Վերջին դատաստանին նա չպիտի ների, չէ՛, չէ՛, դրացի, նա չպիտի ների... Աղջիկներ կան, որ դժոխքի կրակների մէջ պիտի այրուեն... Իմացա՛ր նորութիւնը...

— Ի՛նչ նորութիւն, դրացի:

— Անտառապահի աղջիկը մը օտարի հետ...

*ԼԿԱՆՆՔԻՆ ՎՍԺԱՌՄ Է:*

Խեղճ մայրը տեսնէիր...

— Ի՛նչ ամօք...

*ԻՐԵՆԿ ԸՆՈՐՔՆԵՐԸ ԿՑԿՈՒՄ ԵՆ ԿՐՃՔԻ ՎՐԱՅ ԵՒ ԵՐԵՐՈՒՄ:*

— Ամօ՛ք, այո՛, ամօ՛ք... Այդպիսի աղջիկներին առջեւ եկեղեցու դուռը պէտք է որ փակե՛ն:

— Բա, չփակե՞ն... բա, չփակե՞ն...

— Հայրը տունից դուրս է վռնդել:

— Շատ լաւ է արել... բա, չվռնդի՛ր, բա, չվռնդի՛ր...

*ԼՐՈՒԹՈՒՆ:*

— Փառք Աստուծոյ, դրացի, պատուով ապրեցինք:

— Պատուով, արուռով, խոնարհ ապրեցինք:

— Սուրբ Կարապետը մեզ պաշտպան լինի:

— Սուրբ Աստուածածինը... Մայր մեր Մա-  
րիամը...

*ՆՈՐԻՅ ԵՐԵՐՈՒՄ ԵՆ, ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋ:*

— Նորից մի աշուն, դրացի:

— Շատ տխուր, շատ տխուր մի աշուն...

— Տերեւները քառամում են... մեռնում...

**ՄՆՆՆԵՐԿՈՂ**

... Թրքուն շուքերի մէջ, լոյսերը դժգոյն ոսկի-  
ների արցունքներ են լալիս...

**ԵՐԿՈՒ ԷՂՋԻՎՆԵՐ**

— Ու պարտեզի մէջ, մեծ վարդենիի տակ, նա իր սէրը ինձ յայտնեց...

— Իսկ վարդենին սարսե՞ց...

— Կուրծքս դողում էր, սիրտս կծկուել էր... եւ նա՛ դժգոյն էր, տենդոտ...

— Դժգո՞յն էր... տխուր էր...

— Տխուր էր, այո... Տխուր է սէրը: Ինչո՞ւ տխուր է սէրը՝ ոչ ոք կարող է ասել: Սպասում ես, ցանկա-  
նում ես, երագում ես գիշերներում երկայն եւ անա որ, գա-  
լիս է մի ցաւ քաղցր, տրտում աչքերով նայում է, նայում ու սիրտդ կծկում:

— Եւ ինչո՞ւ, քոյրիկ, աչքերը սիրոյ տրտում են  
այնքան ...

— Ո՛վ է իմանում... ո՞վ է իմանում...

### ՈՒՐԻՇ ԵՐԿՈՒ ԵՂՋԻԿՆԵՐ

— ... Եւ յանկարծ, մատնին հորի մէջ ընկաւ :  
Գիշեր էր աստղոտ եւ լուսնոյ դէմքին մի ֆոյ էր իջել : Ասեց .  
ուզո՛ւմ եմ տեսնել ոսկէ այն մատնին ուր ես քեզ տուի : Երբ  
տալիս էի, յանկարծ մատանին ձեռքիցս սահեց եւ ան-  
հետացաւ :

Ուզեց շուտ իջնել մատնին ազատել : Բայց խո՛ր էր  
հորը, շատ խո՛ր էր հորը :

Ասացի՛ տե՛ս, ջուրի տակ մատնին փայլում է նո-  
րից, կայծկլտում, վառում, փայլում է նորից... Իսկ նա-  
իմ տուած մատնին չէ՛, պատասխանեց, պլպլոյ աւտոյ է :

Ու հետացաւ հեծկլտալով եւ էլ երբե՛ք, երբե՛ք  
չեկաւ :

— Եւ հիմա, այնտեղ, հորի յատակում, մատանին  
լուսեղ սպասում է միայնակ... Եւ այն մատանուն, մատա-  
նուն լուսեղ ո՞վ է համբուրում...

— Թեքես աւտոյ մի...

### ՄՆԱՆԵՐԳՈՂ

Աշունը՝ տխրադալուկ սուգ, արձագանք անշշուկ,  
հոգիների նրբանցքներում կաթկթոյ արտասուք :

Հեռուներից առաջացող փայլերի տակ  
սուտակ

ստուերներ են կայծկլտում

եւ մէկը գամում է, եւ մէկը տրտունջ եւ մրմունջ  
գամում է

մեռած յիշատակների

օրօրուող դագաղը :

Կամաց կամաց, երաժշտութեան մէջ լուրքեան,  
գնում է Աստուած

ու կարդում

ընկնում, չարչարում հոգիների գրքում —

մինչ նրա մերկ ոտքերի տակ

խարշափում են տերեւները տխրագին

վերջին շունչը շնչելով :

Աշունը՝ տխրադալուկ սուգ, տարածութեան մէջ սահող  
նաւ ոսկէ եւ անյայտ .

մեռնող հող՝

պլլում արմատներին ուշաթափում

եւ ձայն մարում՝

սպաննուող քոչունների

արիւնների հետ բոցակիզուող :

Աշունը՝ դեղին քաղ

դժգոյն Աստուծոյ գլխին

եւ յիշատակ՝

թառած

դիակների մոմէ երեսին :

*Երգե-ու-մ է Սիրվարդը:  
Յղի, Գևորգն յհասայ ժամայ, յորմո-  
թեամբ Ե զարմանքով Լեցու-ած աշ-  
քորը Լայն բացու-ած:*

*Չտոքորի մէջ մի մտն նո-ու, որ  
ստղմո-մ է Կրօքին:*

*Ետե-ից, անտառ-ի տառ-աւ Կնո՞ւ  
ստու-ցրը, որը քիչ յտոյ անհետ-  
նու-մ է:*

### ԱՐԿԱՐԴ

Երբ նա ելլէ արեւի պէս եւ քովոյ ինչպէս բոյնից  
նետուող ննդուկ, եւ ծլըւլի եւ լայ, կանչէ. — Ես պիտի լամ,  
ինչպէս մի խենդ պիտի խնդամ...

### ՕՂԻ ՉԱՅՆԸ

Տերեւների հետ միասին  
օրօրում է հառաչանքս:  
Ես ի՞նչ ասեմ այդ ձայներից...  
Իջնեմ, իջնեմ...

### ԱՐԿԱՐԴ

Երբ նա ննջի աստղերի հետ, մօրը պլլուած գառ-  
նուկի պէս, ես պիտի լամ աստղերի հետ...

### ՀՈՒՐՆՐԻ ՉԱՅՆԸ

Տերեւների դիակները  
ու քառամած ծաղիկները  
հեծկլտում են կարկաչի մէջ  
անդնդաշէջ:

### ԱՐԿԱՐԴ

Երբ նա խօսի, ձեռքերը ինձ երկարելով, դայլայ-  
լելով — ի՞նչ երջանիկ պիտի լինեմ:

Ու հասկանալ երբ սկսի՝ պիտի պատմեմ մի պատ-  
մուքիւն, իր մօր սրտից պոկած հեքեաք... այնքան տխուր,  
սրտակտուր...

### ՄԵՌԱԾ ԺԵՐԵՒՆԵՐԻ ՉԱՅՆԸ

Մէկիկ, մէկիկ,  
հովահալած  
ընկանք  
մեռած:

### ԱՐԿԱՐԴ

Պիտի նրան տամ սիրուն անուն. առասպելի նման  
հնչող պիտի նրան տամ սիրուն անուն... Պիտի նրան տամ  
անունը նրա՛. բայց ո՞վ էր նա, ինչո՞ւ չասեց անունը ինձ.  
— առասպելի նման հնչող անունը ինձ...

### ԲՈՒՐ ՉԱՅՆԵՐԸ

Աշնան վարդերը  
ֆիչ օր են ապրում.  
աշնան արեւը  
ֆիչ օր է ապրում:

### ՍԻՐՎԱՐԴ

Բայց ինչո՞ւ չասեց անունը նա ինձ... Հիմա ի՞նչ  
օրօր պիտի ես երգեմ եւ ի՞նչ շորերով նրան փաթաթեմ...

*Լաւոս է:*

### ԲՈՒՐ ՉԱՅՆԵՐԸ

Տերեւներով, տերեւներով,  
աշնանային բոլոր մեռած  
ոսկիացած  
տերեւներով:



*Գիւղացի Կիւնոր, Գարուղիւսորով Լա-  
ցոյն Կողովները Խոսնց Գուրն Բոնած,  
Երբ ու Կարապոյ ուրախ անցնորմ՝ Են:  
Նրանց առ-աճնորդ-ու՝ է Նողազա-  
դէմ մ'ի Երեւանարդ ճաղկազարդ մ'ի  
Նողազ ձեռքին:*

### ԵՐԻՄԱՆՐԻՇ

Հէ՛, կիներ՛ր, տանձ ու խնձոր նուիրեցէ՛ք ամէնին.  
պտուղները գոհեցէ՛ք երկնքին:  
Աստուածներին փառաբանութիւն,  
իսկ մեզ՝  
սէր ու հեշտանք, գինովութիւն...

### ԿԻՆԵՐԸ

- Կորի՛ր գնա, քեզ պէս տղուն գինի չկայ:
- Դու գինի էլ դեռ չխմած՝ երեքում ես ինչ-  
պէս արբած:
- Դու ո՞վ էս որ...
- Ուրկի՞ց եկար...
- Ինչո՞ւ եկար:

### ԵՐԻՄԱՆՐԻՇ

Ինչո՞ւ եկայ...  
Ա՛յ, ա՛յ... գինիների ոգին եկել  
նստերիս մէջ հով է դրել...

*Գինովի ձեռք է առու՛մ:*

Ա՛յ, աղջիկ, խնձոր քուշդ  
ես խածնեմ,  
բերանդ լաւ  
համբուրեմ.  
Կրժֆիդ ծովում խեղդուեմ:

## ԿԻՆՈՐԸ

- Չար սատանա՛յ...
- Այ անամօ՛ք...
- Այդքան էլ լի՛րբ...
- Գոնէ մարդի նմանէիր...
- Բերան ունես ա՛յսքան մեծ...
- Այծու ոտքեր...
- Այծու պոչիկ...
- Կորիր գնա՛, կորիր գնա՛...

## ՆՐԻՄՆԱՆՐԴԸ

Հէ՛, կինե՛ր, ուրախ երգեր երգեցէ՛ք,  
ծափ ծափեցէ՛ք —  
պարեմ պիտի:

Հէ՛, կինե՛ր, կարմիր թուշեր,  
համբոյր տուէ՛ք,  
ձեռքս առէ՛ք —  
պարեմ պիտի:

## ԿԻՆՈՐԸ

- Հնձանի մեջ խաղողները երբ նմանե՛ք՝ քեզ էլ  
հետը պիտի նզմենե՛ք:
- Կարմիր կրակ գինիները երբ մենք խմենե՛ք՝ քեզ  
էլ հետը պիտի խմենե՛ք:
- Հա՛, հա՛, հա՛:
- Կարասները երբ որ թաղենե՛ք՝ քեզ էլ մէջը  
պիտի թաղենե՛ք:

## ՆՐԻՄՆԱՆՐԴԸ

Արէ՛ք այնպէս ինչպէս կ՛ուզէ՛ք:  
Երբ ինձ նզմէ՛ք —  
ես գինու հետ նորէն կ՛եռամ.  
Երբ ինձ խմէ՛ք՝  
ծեր ծիծերից  
նորէն  
աղբիւրի պէս  
պիտի հոսեմ ազատօրէն:

*ՃԻՏԱՊ, ՏԱՎ, ՈՒՐԱՍ ԸՎԱՅՆՈՐ:*

## ՄԱՅՐԸ

*ՎԱՅՐ ԸՆԿԱՏ ԹԱՐՈՒՂՆԵՐ ՅՈՂՈՎԵՐՈՎ:*

Ահա մի խնձոր եւս... մի տանձ... Խեղճ երե-  
խայիս սիրտը կարող է ուզել... Ո՛վ կարող էր մտածել...  
Այնքան միամիտ, այնքան մաքուր աղջիկ էր. հրեշտակի պէս  
խնդուն ունէր, պայծառ, խոնարհ աչքեր ունէր... Ո՛վ կա-  
րող էր մտածել... Վախով, դողով եւ պահեցի, փայփայեցի.  
ձեռքս ձեռքին, սիրտս սրտին, աչքս աչքին՝ եւ պահեցի.  
Խնամեցի տարիներով եւ ի՞նչ եղաւ... ո՛հ, իմ Աստուած, եւ  
ի՞նչ եղաւ...

*ՉՆՈՔՆԵՐԸ ԿՈՐԻՐՈՒՄ Է:*

Դա ի՞նչ բան էր գլխիս եկաւ... դա ի՞նչ գայժ էր  
դուռս գարկաւ... (*ՆՈՐԻՅ ՅՈՂՈՒՄ Է*) մի քիչ խաղող...  
մի տանձ եւս... Էն դիրքի մէջ սիրտը կ՛ուզէ... Մարդիկ

չա՛ր են, չա՛ր են, չա՛ր են... Ո՞վ կարող էր մտածել... եւ  
ն՞ւր գնաց, տէր իմ Աստուած, նա ո՞ւր գնաց...

---

---

### ՊԱՌԱՒ ԿԻՆԸ

ժամը հասուն է:

*Հոգոտում է:*

Նուրը նեղկում է.  
հողը ըմպում է  
արիւնը նոսն  
եւ իր սարսան  
բաց շրթունքներից  
սերմը ժայթկում է:

*դ.էմ.քը ժայն ու վրայ եղաց, մա-  
ղբոս ցցուած, ամբողջ մարմնով գո-  
ղաւով, սրկարօրէն հոգոտում է հո-  
ղբոս եւ կամաց կամաց հեռանում:*

*Հող եւ ուժգին տերտաթափ:*

*Ճառ-տրի միջից Խոբ-լօրէն հառաջող.  
ձայնոր են աւոում, յեօոյ, աստիճա-  
նաբար ուժեղանում են, վեր ածուում  
լացի եւ աղաղակի, գազանի մոնջոցի,  
ստանդանոցի եղբրական գոտում գո-  
ջումի ժայ մեռնողի վրւ ճիջի:*

*Կինը ծնում է:*

### ԵՐԿՈՒ ՄԱՐԴ

*Վիատիզում են:*

— Աչքերը... նրա աչքերը...

— Երկրաշարժի ժամանակ, գոմերում փակուած  
կովերը այդպէս են բառաջում...

— Մի անգամ, այրուող մի տան մէջ, մի կին պո-  
ռում էր նիշտ այդպէս...

— Տէ՛ր իմ, Տէ՛ր իմ...

— Աչքերը... մորթուած գայլի նրա աչքերը...

— Տէ՛ր իմ, Տէ՛ր իմ...

---

---

### ՕՒՒ ԶԱՅՆԸ

Սրտիս  
դաշոյն  
գարկին.  
շրթերս  
պատուեցին  
ձայները...

### ՄԵՐԵՆՆԵՐԸ

Թողէ՛ք ընկենե՛ք —

Ո՞ւր է՛ք տանում, ո՞ւր է՛ք տանում...

Թողէ՛ք ընկենե՛ք —

մեռնենե՛ք:

## ՉԵՅՆՈՐ

- Թուրը զարկին աղիքներին... ա՛-ա՛-ա՛...
- Բագուկներս փշրուեցին...
- Մսերիս մէջ հրդեհ ընկաւ...
- Ոսկորներս կոտրուեցին...

*Եւ մտողը անտարու վայրում է:*

## ՄԵՆՆԵՐԳՈՂ

Մրնահարում են երկնականարը...

Ո՞վ է սոսկալիօրէն հառաչում այս ժամին.

Ո՞ր գայլն է ոռնում եւ ինչո՞ւ այլափոխուած խեղճ ոչխարի մայոցը՝ բախում է դուռը եղերական աշնան:

Ո՞վ է այն, անկարելի կտտուանքներով ոսկորները նմում:

Ո՞վ է զարնում իր երկաթէ անգութ բռունցքը այդ դիւրագայթ, գերագգայուն մերկ էակի մսերին:

Ո՞վ է մաշկում նրա մորթը վարդագոյն.

Ո՞վ է մորթում սիրտը նրան...

Յայտարարում եմ եւ սարսափում, — քանզի այդ քան տանջանք ինչո՞ւ համար:

Յայտարարում եմ եւ սարսափում, — քանզի այդ քան ցաւեր որո՞ւ համար:

Ինչո՞ւ համար —

մսերի մէջ մտած ակուաները այդ սուր.

պայթած երակների ողբը սրտակտուր.

բացուող ոսկորների նիչը ահաւոր.

ու վառ արգանդների վիշտը արիւնքոր:

Մեծագո՞ր Աստուած. կամքդ ի՞նչ է:

Աստուած Տիեզերքի, կամքդ ինչո՞ւ է:

Խօսի՛ր, —

անիծեալ այս ժամին ո՞վ է որ պիտի գայ, ո՞վ է որ պիտի լայ:

Որովհետեւ, Աստուած Քանասնի, Յիսուս Ձիթենաց լեռան, Աստուած ապտակուած, խաչուած —

խի՛ր, ո՞վ է ծնում, մարմինը քէ՞ հոգին, այն որ անսահման է քեւարկում, քէ այն՝ որ ցատկում է ոստէ ի ոստ, սողում քարէ ի քար եւ հողերի կրծքին պլլուելով տառապում:

Աստուած, Ա՛յք քափանցող, Ձե՛նք ստեղծագործ. Սի՛րտ բաբախում, խօսի՛ր, խօսի՛ր —

քանզի ահաւասիկ՝ խեղճ եւ անուժ եմ ես, տերելի նման դողդողուն, վեհերոտ ու շուարած:

Այո, խօսի՛ր —

քանզի ահաւասիկ՝ խելքս սփռուած է տարակուսանքի առջեւ, խոնարհ եմ եւ սպառնացող, վախկոտ եմ եւ ըմբոստ, աղօթող եւ հայեոյող

եւ՝ ահա տառապանքի ձայների մէջ կանգնած

հարցապնդում եմ քեզ —

Ո՞ւր է նպատակը, ի՞նչ է նպատակը:

Ասի՛ր — քանզի պատուում է ձայնս ու հեծկլտող հարցս խեղդում կոկորդս...


*Մի բողբէ ամէն ճնշ տոբում է:*

### ՅԻՄՈՒՄ ԶԱՅԼԸ

Ահաւասիկ մարմինը իմ — քարկոծեցէ՛ք, սպանեցէ՛ք:

Ահաւասիկ սիրտս միայնակ — դաշոյնով սուր վիրաւորեցէ՛ք:

Որովհետեւ Աստուած եմ ես. — ցաւ, տառապանք, զոհաբերութիւն:



## Մ ԱՄՆ ԶՈՐՐՈՐԴ

ԱՄՐՈՒՅԾ ԶԻՒՆ Է ՄԱՔ-  
ՐԱՄԱՔՐՈՒՐ ԵՒ ԱՅՈՒ Է ԲԻՒ-  
ՐԵՂ ՈՒ ԱՄԱՅԻ ՄԵՆՈՒ-  
ԹԻՒՆ Է ԱՄՐՈՒՅԾ, ԻՆՉ-  
ՊԷՍ ԳԵԿԱԹԸ ԲԱՐՉՐԱ-  
ԲԵՐՉ ԼԵՐԵՆ:

Չմտու է:

Էմա յի յարատու-թիւններու քամու-  
ներու ճշումն, չեմում, միօրինակ, ե-  
րկարօրէն ողբում, և այ ւնում:

Երկու ու երկուք քողարկուած են  
անյայտութեան ճիւղէ յոհուով:

Մտումութիւն: Յուղարկա-որական  
միայնութիւն: Մահ:

### ԵՐԿՈՒ ՈՒՂԵՒՈՐՆԵՐ

— Ձիւնի վրայ ոչ մի հետք կայ: Թաղուած քանա-  
պարհները կորած են եւ ուղղութիւնը մնում է անյայտ...

— Քամիները ողբում են... ո՞վ է մեռել...

— Գոնէ որ եւ է նշան երեւէր անապատում այս  
ամայի... փայտահատը այս վայրերում ձեռք չէ տուած  
ծառերին:

— Քամիները հեծում են... ո՞ր հոգին է  
գանգատում:

— Ասում են, պէտք է որոշել հիւսիսը միւս կէ-  
տերը գտնելու համար: Բայց ի՞նչ օգուտ՝ երբ շարունակու-  
թիւնը մնում է անյայտ յաւիտենապէս:

— Քամիները լալիս են... ի՞նչ դագաղով  
պիտի տանեն:

— Ես զգում եմ մարմնիս մէջ մի ինչ որ բան է

անհետանում: Շարժուենք դէպի անձանօքը, որպէս զի տաք  
լինի մի քիչ. այստեղ անապատ է ցրտերի:

— Բամիները հեծկլտում են. — ո՞վ մեռաւ:

— Այո՛, երկինքը խորհրդաւոր է եւ տարօրինակ,  
մինչ ճիւնափոշին լեցնում է աչքերս բուռ բուռ խաւարով:  
Ասում եմ քեզ, այստեղ տիրում է միայն անստոյգը. սպա-  
սենք Դիպուածին:

— Բամիները մղկտում են, մղկտում են, մղկտում  
են... վստահօրէն մէկը մեռաւ:

— Լո՛ի՛ր, մարդ անտանելի: Կարելի է մե՞նք ենք  
որ մեռանք... Կարելի է մե՛նք ենք...

### ՔԱՄԻՆԵՐԻ ՉՔՏԱԸ

Անցնել, նորից անցնել, ցատկել, վազել.  
ռոնալ, կանչել, ձայներ ձայնել,  
խառնշտկել ճիւնը հողին, հողը ճիւնին  
ու ցատկելով վայել, մնչել,  
հեծկլտանքներ հեծկլտալ  
եւ լալ, եւ լալ, եւ լալ...

### ՉԻՒՆԻ ՉՔՏԱԸ

Ես արեւ եմ բիրեղացած,  
սառնամած.  
մաքրամաքուր կուսութիւն  
սգազգած —

սառններով, սառններով  
փաթ-թուած:  
Ես արեւ եմ բիրեղացած,  
սառնամած:

### ՄԵՐՔԵՌԻ-ԹԵՆԱ ՉՔՏԱԸ

Սա՛ն, սա՛ն, սա՛ն...  
Երկնքի տակ  
միս մինակ,  
թափառում եմ  
միս մինակ:  
Միշտ սառ, միշտ սառ.  
ձայնս մրսեց,  
շունչս մրսեց,  
սիրտս մրսեց:  
Սա՛ն, սառ, սառ...

### ԳՆՈՒՔԻ ԿԻՆԸ

Այստեղ փնտռիր, այնտեղ փնտռիր —  
ռչի՛նչ:  
Դեւը ո՛ւր է, Դեւը ո՛ւր է —  
չկա՛յ:  
Պարոն Դեւը անտառի մէջ՝  
մեծ մի սուտ է:  
Նոխազաւոր անտառի մէջ՝  
լուկ մի բուք է:

Այստեղ փնտոիր, այնտեղ փնտոիր —  
ոչի՛նչ:

Ակոաներս կրնոտում են.  
ոսկորներս կոտրտում են,  
աչքերիս մէջ մուր են ածել,  
աղիքներս տարել քաղել:

Ո՛ր հալածանք, ո՛ր հալածանք:

Ոսկորներս ո՞ւր քաղեցին  
ու մազերս ո՞ւր այրեցին:  
Ո՞ւր է, ո՞ւր է գերեզմանս,  
ո՞ւր է վերջին ապաստանս:

Ո՛ր չարչարանք, ո՛ր չարչարանք:

Այստեղ փնտոիր, այնտեղ փնտոիր —  
ոչի՛նչ, ոչի՛նչ, ոչի՛նչ...

### ԱՆՄԱՐԿՈՂ ՆԻ ՅԻՍՈՒՍԻ ՉՔՅՈՒՐ

— Տէ՛ր իմ, Մեծագոր վարպետ —  
կեանքի բոլոր եղանակներին՝ ծաղկածլման,  
ուրախութեան, ժպիտների, արցունքների եղանակներին՝ ես  
փնտոեցի քո ներկայութիւնդ ամենայն բանի մէջ, ամէն տեղ,  
եւ հետեւեցի հաւատարմօրէն քամբիս բոլոր ժամերին, հո-  
գուս մէջ դրոշմուած խորախորհուրդ նշաններին:

Այժմ, մեռելային ու տխուր այս պահին, Տէ՛ր,  
քայլերդ ոչ մէկ հետք չեն քողնում գարեհուրելի այս ճիւղի  
վրայ. դէմքս տուել եմ անապատին ու քայլում եմ գերեզմանի  
մէջ մի անորոշ:

— Կա՛նգ առ. եթէ չես տեսնում կա՛նգ առ: Ճամ-  
բան երկայն է դեռ, շա՛տ երկայն:

— Տէ՛ր իմ, կոխներից, աւերներից, սարսափ-  
ներից յետոյ. յուսահատումի, սպասումի տանջանքներից յե-  
տոյ. իմանալու երջանկութիւնից, սիրոյ վերքերից յետոյ այս-  
տեղ չէ՞ այն կէտը ուր ուժասպառ կանգ են առնում, ուր  
ամէն ինչ վերջանում է:

— Մա՛րդ միամիտ. վերջ չկա՛յ: Ճանապարհը կոր-  
չում է հեռաւորութեան մէջ:

— Եթէ այդպէս է, ասի՛ր —  
այս մարմնի մէջ որպիսի՞ ջղեր պիտի լարուեն՝  
որպէս զի վիճի քոյլ քելերի նման շխտուեն. որպիսի՞ ոսկոր-  
ներ պիտի երկաքանան՝ որպէս զի չփշրուեն եւ ի՞նչ արիւն  
պիտի հոսի կրակների մէջ տենդոտ:

— Աւելի քան մարմին պիտի լինես:

— Եթէ այդպէս է, ասի՛ր —  
հոգուս ո՞ր լարերը պիտի քրքրան, ո՞ր երգը  
պիտի հնչի եւ ո՞ր ուժը պիտի վերածնուի:

— Երգը գիտաւորների եւ աստղերի. երգը սկիզբ-  
նասկիզբ եղանակի: Կշռոյդ եւ խորհուրդ:

— Եթէ այդպէս է, ասի՛ր —  
այս գանգիս տակ որպիսի՞ խոհեր պիտի ար-

տացուլուին, ի՞նչ տրամաբանութիւն պիտի տիրէ եւ ի՞նչ գիտութիւն պիտի դեկավարի:

— Հօրս. — տիեզերքի խոհերով, տրամաբանութիւնով եւ գիտութիւնով, որ ասել է սէր:

— Բայց չե՞ս լսում, Տէր, սառնաշունչ եւ սուկալի քամի:

Ձե՛ս տեսնում, որ չեմ կարողանում ստաջանալ: Բայլերս մխրճում եմ ձիւնի մէջ, սեւ մշուշը աչքերս գիշերով է լեցնում, խեղդում կոկորդս ու մարում թոյլ ձայն:

— Մա՛րդ, չե՞ս տեսնում, որ լոյս, երկինք եւ անապարհ քո մէջն են: Հաւատա՛ եւ կ'առաջանաս:

— Կո՛յր եմ, Տէր:

— Հաւատա՛ եւ կը տեսնես: Իմացի՛ր, իմացի՛ր, դո՛ւ եւ Տիեզերք:

— Կո՛յր եմ, Տէր, կո՛յր եմ: Օ՛ր ցաւ, օ՛ր ցաւ... մրրկահար քամիները ողբում են, փոքորկած տարածութիւնները զարնում են անյայտին, սահմանները փշրուել են եւ ահաւասիկ միակուրթիւնը կլանում է ինձ:

Տէ՛ր Տէ՛ր, ինչո՞ւ հեռացար:

Ո՞ր կողմը ուղղեմ տատան ֆայլերս... ո՞ր երթամ...

## ՉԱՅՆՈՐ

— Բաց թեւեր շնչելով սահում եմ տարածութեան մէջ...

— Թեւեր անյայտ բախում եմ աշխարհներին անյայտ...

— Ու՞ր ես գնում, հոգի:

— Անդնդից անդունդ...

— Անվերջ, անվերջ...

## ԱՄՈՒՆԵՐՆԵՐ, ՆԵՐՎԱՅՈՒԹԻՆՆԵՐ

— Բլրան վրայից ձիւների, յամրաֆայլ, յամրաֆայլ, վայր է իջնում թափօրը անհետացած աշխարհի...

— Մեռած ձայնը մոտալով բարձրանում է եւ հարցնում. — ո՞ւր է գնում, ո՞ւր է գնում ստուերը կորցրած ձայնը մեռած...

— Այս կողմ, այս կողմ... Կամաց, կամաց, դէպի Դուռը վերջնական մօտենում է դասը երգի գերբնական...

— Արցունքներս սառեցա՛ն:

— Ժամը ժամին կպաւ, մեռաւ:

— Օ՛ր ցաւ, օ՛ր ցաւ...

## ՏԱՅՐԸ

Տեղդ հանգիստ կանգնիր... ձեռքերդ մի կտորտիր, մազերդ մի՛ ֆաշիր...

## ՄԱՅՐԸ

Ո՞ւր եմ տանում նրա մարմինը... ի՞նչ հագուստ եմ հագցրել... գէթ մազերը լուացի՞ն...

## ՏԱՅՐԸ

Հոգիին մտածելու է. կի՛ն, հոգիին մտածելու է:

## ՋԱՏԱՆԵՐ. ՀՈՒՔԵՐ

— Մօտենում է յուզարկաւորութիւնը. ահա բե-  
րում են ձիւնէ աղջկան:

— Դժգոյն շրթունքների վրայ սառոյցէ մի ժպիտ  
է ծաղկել...

— Ասացէ՛ք, ո՛ր ասացէ՛ք, յուզարկաւորութիւնը  
այս տխուր՝ սրտակտուր, ո՞ր է գնում, ո՞ր հեռուն է  
հեռանում...

— Այս մրրի՛կը... անստուգութեան սարսափելի  
ձայնը այս, այս մղկտող քաւալումը ոչինչի...

— Ու ձիւնը այս ըմբոստացած՝ մարդ չգիտէ  
ինչի դէմ...

— Ասացէ՛ք, ո՛ր ասացէ՛ք, յուզարկաւորութիւնը  
այս տխուր՝ սրտակտուր, ո՞ր է գնում, ո՞ր հեռուն է հե-  
ռանում...

## ՄԱՅՐԸ

Թողնէ՛իր մօտենայի... վերջին անգամ համ-  
բուրէի ...

## ՏԱՅՐԸ

Ի գուր է, կին: Նրան կը համբուրեն հրեշտակները:

## ՋԱՏԱՆԵՐ. ԱՄՈՒՆԵՐՆԵՐ

— Արձագանգը լուրջեան անապատից անապատ  
գլորուեց գնաց...

— Խեղճ աղջիկը... Խեղճ աղջիկը...

— Ես տեսնում եմ. գալիս եմ:

— Ի՞նչ դանդաղ եմ, ի՞նչ դանդաղ...

— Ասացէ՛ք, ո՛ր ասացէ՛ք, յուզարկաւորութիւնը  
այս տխուր՝ սրտակտուր, ո՞ր է գնում, ո՞ր հեռուն է հե-  
ռանում...

## ՄԱՅՐԸ

Ի՞նչ սաւանով պիտի փաթթեն փոքրիկ ու նուրբ  
մարմինը նրա... Պիտի մրսի, պիտի մրսի...

## ՋԱՏԱՆԵՐ. ԱՄՈՒՆԵՐՆԵՐ

— Գալիս եմ, գալիս:

— Լուրջիւն, լուրջիւն...

*Չի՛ն հագած ճերմազ աղջիկներ  
առ-աջանո՛ւմ են չափ Կամաց հո՞նց  
ուսերի վրայ Կրօնով Սիրովարդի Կրօնաբէ:  
Նրանք ասո՞ւմ են. —*

Ոսկէ Դրան շեմի առջեւ մահը քառեց հեծկլտալով.  
Ոսկէ Դրան լոյսը պայծառ մութը ընկաւ քառա-  
լուելով:

Ձիւնէ հոգին պիտի տանեն անհունի վառ հրեշ-  
տակները  
Իսկ մարմնի խուլ տանջանքը պիտի առնեն սեւ  
հողերը :

Տիեզերք՝ ընդունի՛ր գոհաբերութիւնը :  
Տիեզերք՝ ընդունի՛ր գոհաբերութիւնը :

### ԱՌՆՂԻՆ ՉԱՅՆԸ

Ո՛ր իմ փոքրեր, ասէ՛ք, ասէ՛ք —  
արեւը բիւր շրջաններով,  
աղամանդէ ինչպէս մի նետ  
աստղերի հետ  
ն՞ր է վազում  
ն՞ր անդունդն է որոնում :

### ԵՐԿՐՈՐԴ ՉԱՅՆԸ

Կամաց, կամաց առաջացէ՛ք —  
աղօթեցէ՛ք :

### ԵՐՐՈՐԴ ՉԱՅՆԸ

Ո՛ր իմ փոքրեր, ո՛ր իմ փոքրեր, ասէ՛ք, ասէ՛ք —  
երկրագունդը ընդմիջտ սառած,  
մեռած, մեռած,  
ն՞ր անյայտը, որ անծայրը  
պիտի ընկնի  
մեռա՛ծ, մեռա՛ծ...

### ԽՈՒՄԲԸ

Դո՛ւռ երկաթէ, սհաւասիկ բիւրեղացած խօլ երազ-  
ներ.  
հազիւ ծլած, բոցերի մէջ ըմբոստացած ցանկու-  
թիւններ.  
Ֆեզ ենք բերում եւ աղաչում լալսհառաջ աղօթք-  
ներով —  
լուսաւորի՛ր, քեւաւորի՛ր երկնփնտրի հարսը այս  
նոր :

Տիեզերք՝ ընդունի՛ր գոհաբերութիւնը :  
Տիեզերք՝ ընդունի՛ր գոհաբերութիւնը :

### ԵՐԿՐՈՒ ՉԱՅՆԸ

Ո՛ր իմ փոքրեր, ներմակ փոքրեր, ասէ՛ք, ասէ՛ք —  
երկրագունդը ընդմիջտ սառած,  
մեռած, մեռած,  
ն՞ր անդնդում քաւալուելով պիտի կորչի,  
անհետանայ, փռշիւնայ —  
երկրագունդը մեռած, մեռած...

### ԵՐԿՐՈՐԴ ՉԱՅՆԸ


Կամաց, կամաց առաջացէ՛ք —  
աղօթեցէ՛ք...

## ՔԱՄԻՆԵՐԻ ՉԱՅՆԸ

Տարածուք-իւնները այրել,  
վազել, ցատկել, փշրել, կանչել,  
գիշեր ցորեկ մայել  
անծայրի մէջ  
անդնդաշէջ  
դարձիդարձով պտտել  
ու ոռնալով ձայներ փնտտել  
ու լալ, ու լալ, ու լալ...

*Անջ ա յի-տես քամիները աւազին  
երգում են ու ողբում ձուներ Եւ մահի  
խոթորակներն հետ՝ ժարասութեան  
սառնասառ-դաճնալութեան մէջ  
մերթ Ենդ մերթ աւում է Անտրոպոլ!  
ողբերգական ձայնը: —*

Ո՞ւր ես, Տէ՛ր, ո՞ւր ես...



**ՉԱՅՆԵՐ ԵՎ ԵՂԵՅՈՒՄ**  
**ՏՈԳԵՐԳՈՒԹԻՒՆ**

գրեցրային բարձր տո՞ւթիւններ  
մէջ Խորասորտի ճաճանցող աստղերի Գա-  
տիւն և ցրտի մ' անհոնոյ Գօտտա-  
րար:

Խորքում, մութը Գրգու և սեղանը,  
սպայն, առջեւ, մ' քանի Գտ-  
ջմարած մոմեր պատում են Գողթ-  
քուն ու մոռալ բոցերով, մերթ ընդ-  
մերթ Գորս ցարկեցնելով ոսկրների  
Գոնար ու թառամած ներկայու-  
թիւնը: Հասար մ' քիչ Կարճ սու-  
նքը, ստուգների Խաղին մէջ, նմա-  
նում են զլուս հոգաների, որոնց ու-  
սերի վրայ բեռնանում է աշխարհ  
ճանրութիւնը:

Մտոր ու տապալ Եղեցու Կնքը  
լցողն է ճանրածանր Խոչերով:

Պատերի նկարների վրայ Գրեցր  
Թրտոուն քողեր է ման ածում:

### ՄԵՆԵՐԳՈՂ

... Անհունի խոր լուսիւնների մէջ ձայնում են  
լարեր լալագին եւ տաղերը երկնային:

Ճերմակ քոչունների ներմակ քեւարկում —  
աստղերի բարդ երգեհոնի լոյսերն են ժողովում:  
Տիեզերքի վրայ, յամբօրէն, ձիւնէ վարդի ծուէններ  
են սաւառնում: Անսահմանից անսահման սրսրփում է հոգի-  
ների մեղեդին

ու յոյսերի խարոյկը՝  
աղօք-ֆների, սաղմոսների սրտից պոկած մեծա-  
քռիչք բոցերով  
նարնատելով  
արեւելքի լուսօրեան մէջ նոր կեանք առնող ցաւն  
է հիւսում:

### ՏՐԵՃՄԱՎԱՐ

Անդրնկաց եկեղեցում  
ֆերովբեներ կաթոգին  
տաղ են երգում  
պոկած Աստուծոյ շրթունքներից:

Անդրնկաց եկեղեցում  
ահա նախքը հոգիների  
ու շնչող ձայնը աստղի:

### ՄԻ ԲԵՐՈՎԲԷ

Տեսայ —  
նառագայթի վրայ լուսնի  
աղօթելով —

տեսա՛յ, տեսա՛յ —  
դէպի երկինք բարձրացաւ  
եղբայր մի  
նառագայթի վրայ լուսնի:

### ՄԱՐՈՒՈՂ ՄԻ ՄՈՍ

կաթիլ կաթիլ  
նսֆերէդ  
արիւն քարուեց  
ու սպաննեց,  
գոհարերեց  
լոյսս  
մատաղ:

### ՄԻ ՆՈԳԻ ԵՂՈԹՈՒՄ Է

Քո աստղերը, օ՛ Աստուած, նման են վարդերին որ  
լուսինը համբուրեց եւ պարտէզդ դրախտավայր, հրաշքով  
պողած, ոսկիներով շղարշուած, լեցնում են ինձ անստու-  
գութեան հեղ ֆաղցով:

Թռիչքս երերում է, օ՛ Աստուած, տարածութեան  
մշուշապատ անդունդներից հալածուած եւ հովերից համ-  
բուրուած:

Օգնի՛ր, օգնի՛ր ինձ Աստուած:

**ՄԻ ՉԼՅՆ**

Պիտի դառնաս բոց մի յստակ .  
պիտի վառուես սուրբ ոտքերի  
արիւնահոս կաթիլների  
հրաշքի տակ :

**ՈՒՐԻՇ ՄԻ ՉԼՅՆ**

Պիտի դառնաս կաթիլ արցունք  
Աստուածամօր տառապագին  
աչքերից վայր  
կամաց ընկած :

**ՄԵՆՏԵՐԿՈՂ**

Երկնքների բոցակիզուած աշտարակից քաւալուե-  
լով վայր են ընկնում մեծ յամբուրթեան ժամերը եւ սրածայր  
նետերի պէս խոցւում կրծքին հողերի  
ու սրտերի միջից պոկում՝  
ձայներ վշտի, ձայներ արեան, ձայներ կրակի :  
Եկեղեցին տուն է ցաւի :

**ՉԼՅՆԵՐ**

Պոօ՛սխումէ, պոօ՛սխումէ :

*ՊՂԱԺԵՐԻ ՎՐԱՅ ԿԱԽՈՒՄՑ ՀՐԵՏՏԻՎԿ՝  
ՆԵՐԻ ԵՒ ՍՐԲԵՐԻ ՆԿԱՐՆԵՐԸ ԱԿՍՈՒՄ՝ ԵՆ  
ԿԵՆՏ-ԱՆԱՆՆԱԼ ԵՒ ՀԱՐՔՈՒՄԸ :*

**ՄԻ ՄԱՐԴԻՐՈՍ**

Անապատների մէջ քաշքշեցին պատուաւ իմ  
մարմինը եւ մինչեւ գլուխ աւազի մէջ քաղեցին իմ մարմինը .  
եւ եղաւ մարմինս դիակ անկենդան եւ ծով աւազի  
մէջ եղաւ գլուխս ուրուական :  
Կանչ կանչեց ձայնս կոկորդս նեղֆելով՝ Աստուած  
մարտիրոսաց ո՞ւր ես —  
ի պատասխան հով մի անցաւ մայելով :  
եւ եղաւ մարմինս դիակ անկենդան եւ ծով աւազի  
մէջ եղաւ գլուխս ուրուական :

**ՄԻ ՉԼՅՆ**

Պոօ՛սխումէ, պոօսխումէ :

**ՈՒՐԻՇ ՄԻ ՄԱՐԴԻՐՈՍ**

*ՀԵՌՈՒԻԿ ԼՍՈՒՈՂ, ԽՈՒՆ ԵՒ ՄԻՄ-  
ՃԱՅՆ ՄԻ ԵՐԱԺԵՐՈՒԹԻՒՆ :*

Խարազանեցին մարմինս եւ խարազանեցին հոգիս :  
Օձուրեց ոգիս մարմնի մէջ մի օձի :  
Գիշերների երազների մղձաւանջը մրնահարեց հո-  
գիս եւ տարակոյսների սեւ որդերը սողացին մերկ գան-  
գիս վրայից :  
Խաւար էր աշխարհ եւ մութ էր երկինք :  
Բայց նա՛ որ զարկեց խիզն իմ, որ լեցրեց ինձ

ցաւերով, որ այրեց արիւնս քոյներով, որ ոսկորներս փշրեց —  
ասեց.

դո՛ւ ես իմ զաւակ, մա՛րդ տառապանքի եւ լսօ-  
լութեան.

եւ երբ ասեց՝ իջաւ լոյսը երկնային եւ վառուեց  
աշխարհը սպառնացող բոցերով:

*Պատգամները անհանգիստ երեւո՞ւմ են:*

### ՆՐԵՃՈՒԿՆԵՐԸ

Տարածութեան կատարին  
հեղեղ մի երկնային  
մոնչում է քաւալուելով:  
Որտում է ձայնը  
աստուածային,  
հեծկլտալով  
դուրս են խուժում հովերը  
ու փրշրում կոհակները  
ծովերի:



*Երաժշտութիւնը տո՞ւմ է:  
դ. Բանց, սպիտակ թռչել բայց յետոյ  
աւելն ու աւելն ուժեղ, բաւո՞ւմ են  
ցեղեցո՞ւ գո՞ւնը:  
Լու՞մ է Խո՞ւ մի ձայն:*

### ԴՐԱՒ ՉԼՅՈՒՄ

Ժամկո՛չ, ժամկո՛չ, բաց արա դուռը... երեխան  
հիւանդ է, շատ հիւանդ է... հաղորդութի՛ւն, ժամկոչ...  
Քնո՞ւմ ես անիծեալ... Ի սէրն Աստուծոյ, վերջին շունչը տա-  
լից առաջ շուտ հասէ՛ք... Տէր Հայրը ո՞ւր է... ժամկո՛չ,  
ժամկո՛չ... պէտք է ազատել այդ հոգին... չե՞ս հասկանում  
էրիստոնեայ... ժամկո՛չ, ժամկո՛չ...

*Մի մո՞տ հանգչո՞ւմ է:*

### ՄԵՌՔԻ ԵՐԵՒՅՅԻ ՆՈՒԻՆ

Ի՛մ Աստուած, ահաւասիկ աչքերը իմ՝ կարգա՛ եւ  
տես — պարզ եմ եւ վնիտ ինչպէս ջուրը ական.  
Եւ ահաւասիկ հոգին իմ՝ անարատ որպէս ադա-  
մանդ եւ մաքուր անմեղութեամբ, ինչպէս հրեշտակներիդ  
նայուածքը եւ քերովքներիդ ձայնը:  
Ի՛մ Աստուած, ի՛մ Աստուած...



*Սեղանի զբայի գետ ջմարուտս մո-  
մբը մէկ էւ անհանգիստ շարժութիւն  
են ու գողո՞ղաւոյ բոցկտո՞ւմ: Կա-  
նանջ այդ տոյսերի ետեւ յանկարծ  
երկու աչքեր են վառութիւն արցուն-  
քոյ ծածկութեամբ:  
Ու արու՞մ է կատուածամօր ձայնը:*

## ԿԱՄՈՒՆԻՍՏԻԱԿԱՆ ՉՔՅՈՒՄ

Ես եմ Մայրը...

Ընդմիջտ, ընդմիջտ մեկնեցաւ  
գաւակ իմ որ խաչուեցաւ :

Ես եմ Մայրը . . Աչքերս յառած  
դէպի նամբան երկայնատարած  
ուրկից անցաւ իմ Աստուած :

Սիրտ եմ ես, լալիւն եւ ցաւ,  
ողբը նրա որ մեռաւ :

Ես եմ Մայրը — Մարիամը —  
վշտի ժամը

որ զարնում է հեռուներէն  
ձեռքը հրագէն

գաւկիս, գաւկիս, որ մեռաւ,  
որ խաչուեցաւ :

Ե՛ս եմ Մայրը :

## ՄԵՂՏՐ

— Արցունքներդ աղամանդ եմ, Մարիամ, հոգիներ-  
բում մաքրամաքուր, անքառամ :

— Արցունքներդ լոյս վարդեր եմ, Մարիամ, հո-  
գիների փերթակներում քաղցրահամ :

— Արցունքներդ բաժակներ եմ, Մարիամ, հոգի-  
ների ծաղիկներում բարեխնամ :

— Մարիա՛մ, սիրտի՛ր լոյսդ արարչաւանդ՝ սրտերի  
մէջ ընդմիջտ հիւանդ :

— Մարիա՛մ, ածիր սէրդ հրատուչար՝ սրտերի  
մէջ վիրաւոր :

— Մարիա՛մ, լեցուր յոյսդ արեւնավառ՝ սրտերի  
մէջ անմխիթար :

## ՄՈՍՏՐԸ

Մեր բոցերը ջերմ փերթեր եմ  
ծաղիկների հոգեռանդ .

վառ ձիւնների ծուէններ եմ, —

լուռ ցաւեր եմ

ու խոհեր եմ վշտաւանդ :

## ՔՐՈՒՎԵՆՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Ծովերը երկինք եմ բարձրանում,  
մրբիկը ամպ է պատուտում :

Լոյսերի մէջ

փողփողեմէջ

աստղեր ահա գլորուեցին,

անցան, անցան,

բախուեցին՝

անսահմանից անսահման :

Միայն Մարիամի ձայնն է յստակ,

միայնակ, միայնակ

որ տրամասուգ,

ինչպէս գառնուկ

սպասումով հալածուած

կանչում է անաղմուկ. —  
գաւա՛կ, գաւա՛կ...

Ծովերը երկինք են բարձրանում  
ու փոքորկում:

## ԵՂՈՒՔՆԵՐ

— Մա՛յր Մարիամ, արա այնպէս, որ արտերը  
ծով ցորենի ալիքներով օրօրուեն եւ ձմեռը՝ սեղանի վրայ  
հացը լինի ոսկեցող:

— Մա՛յր Մարիամ, արա այնպէս, որ բշուառու-  
րիւնը սուր ակօսաներով, մարմինը մեր չկրծի եւ չկրծի հո-  
գին մեր եւ լինի ժպիտը լուսոյ եւ լինի լոյսը սիրոյ:

— Մայր Մարիամ, արա այնպէս, որ կրակը չլափի  
մեր տունը եւ որ վէրք, բորոտութիւն եւ ամենայն տեսակ  
հիւանդութիւն, չանդամալուծեն դաժանակիր մարմինը մեր,  
եւ լինի ուժ եւ եռանդ:

— Մա՛յր Մարիամ, արա այնպէս, որ մահը, գի-  
շերներում Տիեզերքի, չըրջի չորս կողմը տան, չհառաչի,  
չողբայ օրօրոցների վրայ մանկանց եւ անկողնոյ վրայ նորա-  
պսակ հարսերի:

## ԵՍՏՈՒՆԵՆԵՐ

Ամէն կողմից գալիս են նրանք՝ հարուստ եւ աղ-  
քատ, մեծ եւ փոքր, եւ նա որ հօգօր է եւ նա որ բշուառ

եւ չոքում են

ու բոցավառ շրթունքներով փսփաում են հսկայ  
ցաւեր ու վէրքերի արիւնների պատմութիւններ:

Եւ կրակը վազում է աշխարհի վրայից՝ արագ,  
սասկալի ու մահաշունչ՝ լափում է քաղաքներ եւ գիւղեր,  
դաշտեր եւ անտառներ

Եւ բոյնը բռնունների եւ բուսիլը ծաղիկների:

Եւ մեծ մունչիւնը ու սղաղակը մարդկութեան՝  
բարձրանում է դէպի երկինք եւ կայծակնահար բախում տա-  
րածութեանց լուրքեան բոցերին

ողբ մեծ տարածելով աշխարհից աշխարհ:

Ես միայն մի մայր եմ, աւա՛ղ, որ սպասում է, որ  
սպասում է...

Ես միայն մի խեղճ մայր եմ, որ լալիս է, որ ողբում  
է, որ սպասում է...

*Նաո, Վ՛հրոտող ճնճղանցոր մ'ի ձա յն:  
Լ՛գոա, աստիճանաբար, ցեղեցիոյ  
չորս կողմ'ը ւցիոտմ' է արօրօրեանց  
ձա յնցորդ, Խոու չեճոտմ'նցորդ, զու  
աղաղակներու:*

*Ներսե, մոմ'երը մ'էկը մ'իտի ցոց-  
իոց մ'արտոտմ' ցն ցե ամ'էն անգամ' որ  
մ'ի մոմ' է չանգչոտմ' մ'ի չեճկւտանք  
է բարձրանոտմ': յոտոցը սպստմ' ցն  
հարտոցը, տաճարի վրայ բառոտմ'նց  
ցն վազոտմ' ու ցեղեցիոյ նաբը ւցիոտմ'  
է չառաջանքներու, ցե չեճեճանքներու:*

## ՄՃՆՆԵՐԳՈՂ

Տո՛ւն ցաւի եւ տառապանքի, տո՛ւն ողբի եւ խա-  
չելութեան,

տո՛ւն աստուածաստեղծ ողբերգութեան.

տո՛ւն արեան պարի, տո՛ւն զոհաբերութեան, տուն  
վշտաբույս արցունքների.

տո՛ւն պատերազմի, յուսաբեկութեան, չքառ-  
ւութեան —

ահաւասի՛կ, ահաւասի՛կ, հրդեհը սրտիդ մէջ,  
սգաւորութիւնը պատարագների

եւ մեռելոցը բազմաձայն:

Ահաւասի՛կ երգը երգոց բանդագուշեալ մարդկու-  
րեան, սրտակէզ եւ աղեխարշ երգը երգոց,

երգը արեան, խաչելութեան:

## ԴՐՄԻ ՉՔՅՆՈՐԸ ԵՒ ԵՂԵՂԷՎՆՈՐԸ

— Գալի՛ս եմ... գալի՛ս եմ... գիւղերից, քաղաք-  
ներից... գարնում եմ, սպաննում, կոտորում...

— Աստղերը մարուել եմ... հովերը ունում եմ...

— Աստուա՛ծ, Աստուա՛ծ... սոսկալի խաւար է  
պատել... աշխարհը գլորուել է մի գիշեր... երկինքը խաւար  
է պատել...

— Օգնութի՛ւն, օգնութի՛ւն... դանակները ձեռ-  
քերնին, արիւնքաքալս պար եմ բռնել...

— Կովերը, ոչխարները սարսափահար վազում  
են... ո՞ւր եմ վազում... ո՞ւր...

— Տուները այրում եմ եւ տուների մէջ այրում  
են մանուկների օրօրոցները եւ այրում է հացը սեղանների  
վրայ խոնարհ...

— Մե՛ծ Աստուած... մե՛ծ Աստուած...

## ՄԻ ԱՌԻՐԸ

Եւ ազադակում էին. խա՛չ հան գդա, խա՛չ հան  
զգա...

## ՉՔՅՆՈՐԸ

— Կրակով պեղում երկնքի վրայ ձայնս ընկաւ  
եւ այրուեց...

— Վայրենաշունչ վոհմակները բոցերի լափում են  
սիրտը պղծների...

## ԱՌԻՐԸ

Եւ ազադակները ամբոյսի պողպատէ գամերի պէս  
գամում էին նրա գլխի մէջ՝ լեցուն քաղցր խոհերով:

Եւ սեւ էր երկինք եւ սեւ էր երկիր:

## ՉՔՅՆՈՐԸ

— Աստուա՛ծ, Աստուա՛ծ... ա՛ն գիշերը ջար-  
դերի, նախնիքների...

— Աստուա՛ծ, Աստուա՛ծ... խաւարի մէջ գլո-  
րուելով քաղաքները մեռնում են...

- Մի՛ խնայե՛ք, պաշտպանուեցե՛ք...  
— Ձեր սրտերը թող լեցուեն վրէժով, վրէժով,  
վրէժով...
- Բացե՛ք դուռը. ազատեցե՛ք, ազատեցե՛ք...

*Չսնդահեցրե սպտոմ՝ ցն մ՛տոս-  
լայնն ճայնող դողանչու:*

### ԱՌԻՐԲԸ

*բարձր ցւ ողբաւ ճայնող:*

Եւ փշեայ սրակ ծակեցին իր գլխին եւ կարմրա-  
կարմիր տօնագգեստով, ինչպէս նոր փեսայ արիւնի, գար-  
դարեցին նրան:

Եւ ասեց Պիղատոս. «Ահա մարդը» — բայց ամ-  
բոյժը. խա՛չ հան գդա, խա՛չ հան գդա...

Եւ թփեցին նրա երեսին եւ ապտակեցին նրա  
երեսը...

### ՉԷՑՆԵՐ

- Բա՛ց արե՛ք դուռը, բա՛ց արե՛ք դուռը...
- Սպա՛ննում են... այրում, փշրում...

### ԱՌԻՐԲԸ

Եւ խաչ հանեցին նրան:

Գամերով ձեռքերը պատուեցին, ոտքերը ծակե-  
ցին եւ խաչը անմեղուքեան եղաւ ջահը արիւնքաթախ  
վրէժների...

### ՉԷՑՆԵՐ

- Ինճնասպանի մի ձայն ընկել է սրտի վրայ եւ  
տատապելով քաբտում է...
- Գմբէքը վառուել է տարօրինակ լոյսերով...
- Ծովի վրայ մի մեծ նաւ յուսահատ սուլում է  
եւ ընկզմում...

### ԱՌԻՐԲԸ

Եւ Յիսուս մարում ձայնով բացագանչեց. —  
Ելի, ելի. լա՛մա սարաքանի... Բայց երկինքը  
լուքեան մէջ քաղուած՝ չորտաց,  
եւ լուս էր Հայրն իր. ինչպէս մի լեռ ձիւնապատ...

### ՉԷՑՆԵՐ


- Ելի, ելի. լա՛մա սարաքանի...
- Ելի, ելի. լա՛մա սարաքանի...

*Տոտա-որ յոթորոյ: Ժայտ-երնն  
Կողջող աւերներու ճայն:*

### ՄԵՆԵՐԳՈՂ

— Ելի, ելի. լա՛մա սարաքանի...  
Այն օրից ի վեր, խաչը իր սեւատարած թեւերն  
է պարզում հոգիների վրայ, ինչպէս գիշերային դժբախտա-  
բեր մի սեւ թռչուն:  
Այն օրից ի վեր, մարդկանց սրտերը խարազա-  
նուեցին.

և ծովեր ու լեռներ, երկինք ու երկիր —  
նշարտապէս, նշարտապէս —  
Գողգոթայի տանջանքներով հեկեկեցին:



*բոլոր ձայները աստիճանաբար  
ւտում են: քիչ յետոյ. —*

### ԱՆԵՐՈՎԲԱՆՆԵՐ

Տարածութեան մէջ ոչ մէկ ձայն,  
ոչ մէկ կանչ:  
Հրեշտակները հիաստանձ,  
ալիստատան ոսկեպար՝  
լոյս են հիւսում սիրաբար:

### ՆՐԵՇՄԱԿՆԵՐ

Թող վայր իջնի ֆողը լոյսի —  
լուսաւորուի ամբողջ աշխարհ.  
Քող վայր իջնի ֆողը լոյսի  
երկրագնդի հետ պտըտի:

### ՄԻ ՆՈԳԻ

Երկրակամարի  
ծայրին կախուել է  
այգաստղը մինակ:  
Կամա՛ց շարժեցէ՛ք

Քեւերը ձեր կրակ՝  
թէ չէ կը մարուի  
այգաստղը մինակ:

*լութում է առաւօտեան զանգապ-  
ներն միօրինակ զողանջը: դռները  
բացում են: Կրամամութի մէջ,  
քահանայ եւ դպրոցներ աղօթ ստութե-  
րն նման շարժում են սեղանի  
առջեւ:*

*Ու ւտում են նրանց դուր ջարթնե-  
ցած քողարկութեան ձայները. —*

— Տէ՛ր, եթէ զըրբունս իմ բանաս, բերան իմ եր-  
գեսցէ գորհնութիւնս քո...

— Տէ՛ր, եթէ զըրբունս իմ բանաս, բերան իմ եր-  
գեսցէ գորհնութիւնս քո...



ԱՄԻՆԻ ԲԵՐՈՒՆԸ

ԴՐԱՄԵՐԿ

ԱՅՅԵՒՈՐ Է ՎԻՇՄԵ: ԱՆՏՈՒՆԻ  
ՊԵՏՎԵՐԸ ՄԻՇՄ ԵՆՅՆԸ ԶԷ:

ՓՇՐԻՐ ԿԵՄՔԻԴ ՄՈՒՐՃԵՐՈՎ  
ՇՂԵՆԵՐԸ ՈՐ ԿԵՇԿԵՆԻՒՄ ԵՆ  
ՔԵԶ: ԱՅՅԵՒՈՐ Է ՎԻՇՄԵ: ՄԻՆ  
ՉԵՐԵԿԵՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵՆՆ ՄԵՂԵՐԸ  
ԲԻԲԵՉԵՆ ԵՆ ԵՒ ՏՄԵՅԻԶ:

ԱՅՅԵՒՈՐ Է ՎԻՇՄԵ:

ԵՐԳ ԵՂԻՐ. ԲՈՅ ԵՂԻՐ:

Ե.

ԵՄՄՂԵՐԻ ՍՎԻՅԸ

**ՆԱՄԵՐԿ**

Անհունների վառ մատերը՝ սրսփալով  
լարերի վրայ խորհուրդների  
եւ սրտի մէջ  
ոսկեջութակ գիշերների՝  
հոգիների բոց են ժողում :

Մինչ տենդագին քեւեր անյայտ  
խոր լուրքեան կուրծքն են պեղում —  
շնչալով սուրում, ֆախրում դէպի երագ :

Յետոյ, կամաց, անծայրածիր  
գաղտնիքներից տարածութեան,  
մի մեղեդի մեղմաբբիո  
դուրս է գալիս եւ սրսփում  
ձայնը տալիս անեզրութեան :

Գիշեր՝ համերգ դաշնալի,  
գիշեր՝ տրտում քագուհի,  
գիշեր՝ խոյանք ոսկեման,  
գիշեր՝ տանար անսահման,  
գիշեր՝ կախարդ երածիշտ  
գիշեր՝ ֆածիշտ աստղերի :

Ու տենդագին քեւեր անյայտ  
խոր լուրքեան կուրծքն են պեղում —  
շնչալով սուրում, ֆախրում դէպի երագ :

Մղոնների ետև ընկած  
մեռնող աստղի մղկտանքը  
անհունի մէջ վայր է գլորում  
ու թաւալում:

Յետոյ ուրիշ բռնկած ձայներ  
սուրում են վար, դէպի անդունդ  
ուր գունդ ի գունդ  
կանանչ աստղեր  
որոնում են անյայտ մի ստուեր:

Եւ յանկարծ, մեծարարբառ մի երաժիշտ բամբրա-  
հար,

հոգետանջ,  
հիաստանջ  
երգում է:

*Մութ Կապոյտ Լուսաւորութեան  
Մայ Հրաշքուած մի բուրի վրայ,  
Թախանցի քղամոմներով ոսկեկարս  
ու Դժոյն աղբիւներ՝ ուռածապան,  
սաղափաճեմ քայլերով՝ սքանչացած  
Դառնութեմ են մարմարէ մեծ մի  
սախորի հուրջը, նման ցրազային  
ստուերներու, որոնք սրտայոյզ տար  
են բռնել մեծ Գաղտնիքի առջեւ:*

## ՄԵՆՏՐԿՈՂ

Ո՛ր գիշեր, ո՛ր գիշեր, շեմիդ սոջե կանգնած,  
լսում եմ սարսուռն քնարիդ ձայնը՝ բիւրեղ եւ օրօրուն,

ուրի շուրջը քափառում է երաժշտական մտա-  
ծումը աշխարհի:

Թեւերդ սլանում են մարմանդ եւ խորհրդաբեր,  
ինչպէս պատարագի Սուրբ Սկիհի վրայ ֆողը քափանցիկ եւ  
տարածում են լեռների, դաշտերի եւ Ովկեանոսի վրայ:

Եւ ահա բաց ես սնում հոգուդ հրաշալիօրէն գե-  
ղեցիկ անդունդը, սփռում ես լայն սրտիդ լուռ տրովումը,  
ուր սահում է երագիս յայտնատես նար:

Ես սիրում եմ քեզ, ո՛ր մեմաստան հոգեստուեր,  
ուր խոհերը վշտանուէր բոց են վառում աննառագայթ ու  
ինքնաբաւ լոյսերով

մեմութեանդ մեմութիւնը պեղելով  
եւ խանդագին հոգուս պարը տաղելով:

Ո՛ր գիշեր, ո՛ր գիշեր —  
լարերդ հնչում են, մեղեդիներիդ շրթունքներից  
աստղերը լոյս են փառում.

ասուպներիդ դեղնավարս վագում են մի մի ջահ  
բռնած —

մինչ մեմութիւնս  
բարձրացնում է մինչեւ լուրթեանդ սահմանը  
խնկաբոյր լուրթիւնը սրտիս՝  
նոյն կրակի մէջ այրուդ:

## ՄԻ ՔՐՄՈՒՇԻ

Թողէ՛ք քափուեն լուսանանանչ վարսերը մեր,  
ո՛ր ֆոյրեր, ո՛ր ֆոյրեր,  
քողէ՛ք ծածկեն երազների պաղ լոյսերով,  
հմայֆներով,  
ուրունների խաւար, խաւար գերեզմաններ:

## ՄԻ ԱՂԶԻԿ

Ահա եկան, ահա եկան՝  
հոգիների ասպուզան —  
մեռած սիրոյ հառաչանֆներ,  
փակ աչֆերով քալսիծներ:

## ՄԻ ՈՒՐԻՇ ԱՂԶԻԿ

Ինձ բանդեցին  
դալուկ ձայներ,  
ինչպէս հովից  
հիւսուած ֆոյեր. —  
ինձ բանդեցին  
դալուկ ձայներ:

## ՔՐՄՈՒՇԻՆ

Անդորրութեան մեղմ շունչի տակ,  
ո՛ր ֆոյրեր, ո՛ր ֆոյրեր,  
մենք նուազած՝ մեռնող սուտակ՝  
համբուրում ենք սուգի յուշեր:

## ՄԻ ԱՂԶԻԿ

Աստղերի վառ սկիհներից,  
բոցակիզուած մասունֆները հոգիների  
վայր են ընկնում եւ աշխարհի  
հետը ծածուկ հազորդում:

## ԽՈՒՄԲԸ

Սափուրը լի է արցունֆների արծաթով,  
սափուրը լի է հոգիների ցօղերով:  
Աստեղալար ջուքակները հեծում են  
պարի նման աշխարհները դառնում են:

## ՄԻ ԱՂԶԻԿ

Աստղը աստղին սէր խոստացաւ  
ռակէարցունֆ լոյսերով. —  
աստղը անդունդ գլորուեցաւ՝  
սէրս ընդմիշտ գոհելով:

## ՄԻ ՈՒՐԻՇԸ

Սարսուռն լարը սրտիս  
երգեց, երգեց  
ու փըշրուեց —  
սարսուռն լարը սրտիս:

## ՄԻ ՈՒՐԻՇԸ

Դողդոզ լարը հոգուս  
ելլաւ, ելլաւ  
աստղերի նամբով  
ու վայր ընկաւ  
լալով:

## ՄԵՆԵՐԳՈՂ

... Եւ Աստուած, իր բոցերի տօսախներում՝  
լուսացնցուղ եւ մոլեգին՝  
մի բիւրազան եւ պետանջ  
տաղ է տաւում անհունականջ  
ու գիշերանց մութերի մէջ,  
անդունդաշէջ,  
հագար քեւեր շարժելով կրակնավառ  
իջնում է վար  
դէպի վիւր անյայտների,  
ով կեանոսը գաղտնիքների:

Մինչ մեղեդին մտածումիս  
վիճն է գարնում հեծող սրտիս  
ու սլանում, ու սլանում...

ԳԻՏԵՐԱՅԻՆ ԱՆԻՐՇԱՆՆԵՐ ԼԱՐՇԵՐԸ  
ՇԱԾ ԿԱՄՎԱԿ ԿՆԶՈՒՄ ԵՆ:

## ՄԻ ՉԱՅՆ

Դալուկ ասողը հեռաւոր  
փայլում է լոյսով անսովոր —  
ասես հոգին է նրա  
որ անա  
հառաչում է,  
կանչում է, կանչում է...

## ՈՒՐԻՇ ՄԻ ՉԱՅՆ

Ինչպէ՞ս անեմ՝ ծանրածանր իմ բեռերով  
դէպի երկինք սլանամ:  
Ինչպէ՞ս անեմ՝ հողահամբոյր իմ վարսերով  
դէպի երկինք սլանամ:

## ՄԻ ՉԱՅՆ

Տե՛ս, բոցավառ սլանցֆներով,  
նրա հոգին անբջասով  
անա վառեց  
լուրբիւնը բիւր համբոյրով  
ու կանչեց, ու կանչեց...

## ՈՒՐԻՇ ՄԻ ՉԱՅՆ

Օ՛ տուէ՛ք ինձ հրաշակառոյց սանդուխներ՝  
դէպի երկինք բարձրանամ:  
Օ՛ տուէ՛ք ինձ ծովէն ելած երազ ամպեր՝  
դէպի երկինք բարձրանամ:

## ՄԻ ՋԱՅՆ

Նրա հոգին պլպլում է  
պղնձաքոյր լոյսերով —  
տառապում է...  
խորախորհուրդ ձեւերով  
պար է դառնում անհունում  
եւ կանչում...

## ՈՒՐԻՇ ՄԻ ՋԱՅՆ

Ո՛ր ցաւ, ո՛ր ցաւ,  
դալո՛ւկ է աստղը մեկաւոր.  
հոգին՝ սգաւոր:

## ՄԵՆՆԵՐԿՈՂ

... Հեռուներում, հեռուներում, պլպլացող մի մեծ  
աչք նայում է սրտերին, իջնում անդունդները մարմինների,  
քաւալ զալիս տարածութեան ու կեանքում, պեղում ձիւնը  
բեռների ու արտասում...

*բւտբւտ որո զրայ Կառնոմ էն  
աղբիները Կամաց Կամաց անհետա-  
նում է: Ճանր մի Լոռութիւն Եւ Թանձր  
Խաւար:*

*Վտղի ուժգին մի նուազ է Լաբում:  
Նոր Լոռութիւնից յետոյ Կրկնում է  
Խաւար ուժեղ ու Լաբում Են ձայներ:*

1.  
Ասպե՛տ, ասպե՛տ, գիշերային ահեղ մութում,  
կատաղօրէն, ինչո՞ւ ոսկէ փող ես փչում:

2.  
Տե՛ս, երկնում, փողփողելով աստղը խօսեց.  
խաւարի մէջ. մեռելների ժամը հնչեց:

1.  
Ասպե՛տ, ասպե՛տ, գիշերային ահեղ մութում,  
այս անդնդում, էլ որս չկայ. — ո՞ւմ ես կանչում:

2.  
Տե՛ս, վերելում, արցնաբար դժբախտ աստղին  
վերջին անգամ փող եմ փչում կողկողագին:

1.  
Ասպե՛տ, ասպե՛տ, գիշերային ահեղ մութում,  
դու երբուն եւ դողահար, ո՞վ ես կանչում:

2.  
Տե՛ս, երկնում՝ ո՛ր ցաւ, ո՛ր ցաւ՝ աստղը մեռաւ —  
հեկեկելով հոգիս ընդմիջտ անհետացաւ:

*Մի գոսաւոր սահողմ է:*

၈.  
၅၆၇၉

Երբ աստուծո խորը զգրչն ձայնե  
երկարորէն թրթռաւոյ ճշտանութ՝ է՝  
արարանութեան մ'էջ մ'ես մ'ն անտա-  
ռն Խարեախ. և Լուսութ՝: Ճեւոյ, Խու, և  
ննջութե Խեղութեան մ'ն ձայն՝ մ'ն զար-  
կանն թախտութ՝ է, աստ Խեւոն Գեւ  
արարորէն ստեղծութ՝, Կտշտութ՝ անտրոս  
մ'ն սահմանն, եւ մ'զգրաւոյ զայս  
ընկնութ՝:

Ղութութն:

Մենջ աստուծանաբար երկնիքը Լե-  
ցութութ՝ և աստղերով՝ աստղերն ու թմբ  
Կաճեալարով՝ երաճութեան մ'ն  
ձայն է Լուսութ՝:

Ու կնե տարութ՝ է:

Փպիտն իր մեռած աստղի լոյս է քառամ:

Մի կին անյագ  
օճապտոյտ բազուկներով,  
մէջքին տմոյն աստղերի գօտի կապած,  
զլիսին մի քագ  
եւ կրծքերի վրայ դողող  
աղամանդէ նանանչերի վզնոց առած —



## ԽՈՒՄԲԸ

Եօքն աստղեր, եօք լարեր  
հնչեցին, երգեցին —  
քեւեր, քեւեր  
կայծկլտեցին  
անհունի մէջ ընկղմելով —  
անհունի մէջ — ո՛ր ծով, ո՛ր ծով :

Եօքն աստղեր, եօք լարեր՝  
մրրկող ոգիներ  
նախրեցին, պարեցին .  
ստուերներ, ստուերներ  
բունկեցին,  
անհունի մէջ օրօրուելով,  
անհունի մէջ — ո՛ր ծով, ո՛ր ծով :

Եօքն աստղեր, եօք լարեր՝  
ռակեճայն գուշակներ  
հիւսեցին,  
լոյսեր, լոյսեր  
տաւղեցին,  
անհունի մէջ պտըտելով .  
անհունի մէջ . — ո՛ր ծով, ո՛ր ծով . . .

## ՄԻ ԵՂՋԻԿ

Միայնութեան մէջ անհուն  
երազների շղարշներ  
փաքաքում են մի անհուն  
ուր սահուն են հոգիներ :

Ուր սահուն են հոգիներ  
փափղումով ծիրանի .  
ուր մարում են կանքեղներ  
մղկտանքով քախծալի :

## ԵՐԿՈՒ ՉԱՏՈՒՄ

Ուր մարում են կանքեղներ,  
միայնութեան մէջ անհուն .  
ուր դառնում է մահաբեր,  
եղերական մի թռչուն :

## ԽՈՒՄԲԸ

Հիւսէք, քոյրեր,  
անդրկաց աշխարհի  
ներմակ, ներմակ երազներ :

Ձեռք ձեռքի մէջ  
աստղերի պէս  
դարձէք անվերջ  
պար սիրակէզ  
ու ջահերով հոգիների  
վառեցէք գիշերների  
խորհուրդը հեզ :

Հիւսէք, քոյրեր,  
անդրկաց աշխարհի  
ներմակ, ներմակ երազներ

*Թմբուկի ձայն: Կանոնատոր օր  
հեծապի հարիտ-աճնցր:*

*Երկնակամարի կրայ բոլոր աստ-  
ղերը հարստում են: Ոմանք զսապի  
նման ուտրուաճ Կառնում են մեծ  
նոյն յեղը, ոմանք ստրում են առեւ  
արագ, երկրի մեկ ճայրից մեքսե ու  
նորից կերաԿառնում:*

*բոլոր արքերը հնչում են:*


### **ՄԵՆԵՐԳՈՂ**

Ես լսում եմ ձայնը ոտքերիդ եւ տեսնում եմ ոս-  
կիները քղամխիդ վրայ մուք:

Ես տեսնում եմ քագդ պլպլացող եւ բոցկլտուն  
մատերիդ շարժումը:

Ես լսում եմ ձայնդ հնչող եւ մարմնիդ կշռոյթը  
սրարփադող —

ո՛ր Աստուած, ո՛ր Աստուած...



Գ.

### **ՄՈԳՆՐԸ**

Խոր գեղեր:

Երկնայամարի վրայից, ճանր ամ-  
տերի նման, մութ գառոյտ չորքեր  
են անցնում:

Վողային գործերների շատ հետա-  
տոր եւ քողարկութեամբ ձայներ:

Լնհանգուս մեծնորս:

### ՄԵՆԵՐԳՈՂ

Այս գիշեր հոծ շուքերը երկնային՝ մեծուքեանս շե-  
մին առջեւ կանգ առին  
բախտեցին դուռը սրտիս  
եւ յուշերով վաղուց լիւծ աշխարհների, պատկեր-  
ներով անծայր ու մութ վայրերի  
էութիւնս լեցուցին:  
Այնտեղ, այնտեղ, ուր քաղեցի քափառումով  
մտքերիս տնակը լուսեղ  
ուր մարտեցին ջահերը  
անցած բազում ֆամբաներիս  
ու այրուեցին սէրերը  
բոցերի մէջ անյայտի —  
այնտեղ, այնտեղ, նորից ահա, քափառում եմ ընդ-  
միշտ լիւծ իմ յոյգերի կայծկլտացող քեւերը:  
Ու այս գիշեր, երկնիների խորքում շարժուող աչ-  
քերը, նայում են ինձ, մթագնած ֆանանջներով պեղում,  
խայտում մեծութիւնս —

Նայում են ինձ  
հոգիս լեցնում տեսիլներով տենդացնոր,  
ուրուականի շաչող, անցնող քեւարկումով  
եւ ձայներով՝ ոսկէ թուր՝  
հոգիս գարնում:  
Ու կանչում...: Ու կանչում...

### ԱՄՈՒԵՐՆԵՐԻ ՉԷՅՆԵՐ

- Հիւսիսային աշխարհների սահմանի մօտ փոթորիկ է...
- Մրրիկ է... մրրիկ է...
- Տխրադալուկ մարմարիոնը սափորի՝ պաղ է:
- Տխրադալուկ մարմարիոնը սափորի՝ գոց է մեռելների համբոյրով...
- ... աղջիկների արցունքներով...
- Ո՞ւր են ընկնում արիւնքաքախ արցունքները...
- Սափորի մէջ, սափորի մէջ, որի շուրջը պար են դառնում հոգիները:

### ՈՒՐԻՇ ՄԻ ԽՈՒՄԲ

- Տես, ո՞ր ֆոյր, մի ասուպ վազեց ոսկեվարս:
  - Աւա՛ղ, աւա՛ղ, մի հոգի էր որ մեռաւ:
  - Տես, ո՞ր ֆոյր, աշխարհ մի կրակ՝ գլորուեց, ընկաւ...
- Աւա՛ղ, աւա՛ղ, վիհերի մէջ անհետացաւ...

### ԵՐԿՐԻ ՄԵՆԱԿԱՅՑ ԱՄՈՒԵՐՆԵՐ

*Խոնկ մ'ուռ թեւերը շարժելով:*

- Լո՛ւռ կացէ՛ք, լո՛ւռ... ահա յամբասպաց յաւէտ հեռացան իդձերս մեռած:
- Խօլ պարերիս ջահերը մարումս սուգի գիշերով ընկան փշրումս:
- Լո՛ւռ կացէ՛ք, լուռ... աստղեր սառնամած անդունդ են գլորումս պլեւս մեռած:

*Ամուսնների թեւերը անհանգստ  
հնչում՝ ցն:*

### ՄԵՆՆԵՐԿՈՂ

Մենուքիւնս մենուքեանդ մէջ վառ է ինչպէս մոմազարդ մի տանար, ո՞ր գիշեր, ուր աղօթքս ծնում ու պանում է  
դէպի անդնդային մտածումը աստուածային:  
Աշխարհը՝ ներքին լոյսով լուսաւոր՝ իր մեծ սրտից աստուածութիւն է ցառագայթում  
ու գոհում  
սարսուռ տենչը, տուայտոդ բոցը, ժայթֆոյ հուրը,  
ծաղկածլուռ ազազակը հողերի:  
Մենուքիւնս մենուքեանդ մէջ, ո՞ր գիշեր, թոյլ մում է դողդողուն ձեռքով վառում

ու նրա բոցը ներհնակրակ նայում է աչքերի մէջ  
անեզրութեան ու կայծկլտում արցունքների վրայ  
անյայտ վշտերի .

որոնք անցնում են ահա  
տրորելով սիրտը խաւարի :

Լո՛ւն է Տանարը : Վա՛ն է Աստղը :

Ո՛ր գիշեր, ո՛ր գիշեր — խորհուրդներիդ սաւանով  
մինչ ծածկում ես մարմինս սառած , ահա որ անհունի արար-  
չական շունչի տակ խարոյկը հոգուս

նարնատում է բոցերի մէջ ,  
միանում ֆալսբող ուժերին  
եւ ըմբոստացած՝

հաստատում էութիւնս մարդաստուած :

Լո՛ւն է Տանարը : Վա՛ն է Աստղը :

---

---

*Բւտ-բո վրայ տարող աղբիկները  
վազողւմ են շորս կողմ հարցաքննելու :*

### **ԵՂՋԻՎՆԵՐԻ ՉՅՏՆԵՐԸ**

— Այն ո՞վ է, ո՞վ է, գիշերանց մէջ, ոսկե-  
զմբուխտ հագուստներով, ձեռքերը վեր կարկառելով, սիրտը  
անդմուած , աչքերը վառ՝

տարածութիւնը խուզարկում  
ու հիացած առաջանում :

— Ի արեւելք ծաղկեց աստղը հրաշավառ :

— Այն ո՞վ է, ո՞վ է, գիշերանց մէջ, թագը ծած-  
կուած սուտակներով, խենդի նման երերալով, խելակորոյս  
իր աչքերով մութին նայում,  
տարածութիւնը պրպրտում,  
շտապ ֆայլերով առաջանում :

— Ի արեւելք ծաղկեց աստղը հրաշավառ :

— Այն ո՞վ է, ո՞վ է, գիշերանց մէջ, ոսկով հիւ-  
սուած պատմումանով եւ փայլփլուն մետաքսներով, իր  
նայումս քը յառում մութին  
տարածութիւնը խուզարկում  
ու շնչասպառ վազում, վազում . . .

— Ի արեւելք ծաղկեց աստղը հրաշավառ :

### **ՄԻ ԵՂՋԻՎ**

Մո՛գ հրաշափայլ, երազների աշխարհից, արեւ-  
ելից կարմրաշղարշ, Բեթղեհէմի պատարագը ի՞նչ խորհրդով  
պիտի օրհնես :

### **ԿՈՒՆՋՐԻՆ ՄՈՒԿԸ**

Ոսկէարցունք լայսերովը աստղերի պիտի օրհնես :

### **ՄԻ ԵՂՋԻՎ**

Մո՛գ սիգանեմ, արեւապսակ աշխարհից, արեւել-  
ից ծաղկավառ, Բեթղեհէմի պատարագը ի՞նչ աղօթքով  
պիտի օրհնես :

## ՏՐԿՐՈՐԴ ՄՈԳԸ

Անուրջների բուրվառով պիտի օրհնեմ :

## ՄԻ ԱՂՋԻԿ

Մն'գ տեսլապաշտ, կախարդական աշխարհից,  
արեւելից հիանալի, Բեթղեհեմի պատարագը ի՞նչ համ-  
բոյրով պիտի օծես :

## ՏՐՐՈՐԴ ՄՈԳԸ

Մաղիկների պայծառ վտիտ հոգիներով պիտի օծեմ :

*Երգնապամատի զրայ մ'ի մ'սճ աստ'ի*  
*է ԵՐԵՒՈՒՄ :*

*Լուսմ է հեռացող ուղեբերի ոտնա-  
ձայնը եւ նրանց զգաց պատուած զան-  
Կացիներու մ'ի օրհնապ զօղանջը :*

## ԽՈՒՄԲԸ

Երեք մոգեր,  
արեւելի երեք մոլի տեսլապաշտներ,  
վառուած լոյսով խորհուրդների  
եւ կախարդուած գիշերների  
հրապոյրներով աստեղային՝

գնացին, գնացին —  
գաւազանով ադամանդէ  
գարկին քագնուած դուռը լուսէ :

Երեք մոգեր,  
արեւելի երեք գօրեղ քագաւորներ,  
երազների հաշիշներով բնդմիշտ հարբած .  
խելագարուած  
պատրանքների զինիներով —  
գնացին, գնացին,  
գաւազանով ադամանդէ  
գարկին քագնուած դուռը լուսէ :

Ու սարսուղ, խոնարհ ձայնով —  
լուսէ դրան առջեւ չո՛քած —  
նրանք երգեցին  
պատարագը ծնունդների,  
պատարագը արեւների,  
խաւարի մէջ ծաղկած լող  
պատարագը պարտեզների,  
աշխարհների պարը դողող,  
տարածութեան քոխէքը խելար  
ու դաշտերի տեսքը դալար :

Երեք մոգեր,  
արեւելի երեք մոլի տեսլապաշտներ,  
գնացին, գնացին,  
գաւազանով ադամանդէ  
գարկին քագնուած դուռը լուսէ :

## ՄԵՆԵՐԳՈՂ

Մա՛յր երկնքի —  
ահուասիկ աստղի վառ՝ մեր սրտերի հանանչնե-  
րով պսպղուն  
և կենդանի՝  
մեր աչքերում ծաղկած երազներով :

Դ.

ՓՈՂԻ ԿԱՆՉԸ

Լնսահմանն՝ փոթորիկների ժայ  
հաջող աստղերի անժառ՝ աւետա-  
շան մրրկութիւն է՝ ողբագին եւ մեծղի  
մի երաւօրութեան նուագների հետ  
սարսուռով:

Չայների բոցեր են սուրութիւն. ան-  
յայտ հոսանքներ են անցնում եւ ան-  
հոհեւ շարժ շարժ բաց է անում ու  
եղերական Գաղափար:

### ՄԵՆԵՐԳՈՂ

Սիրտ իմ, լռի՛ր:  
Այնտեղ, ետեւը սահմանների՝ խաւարի տակ ուր  
գծուած են շրջանները կեանքների  
Քիթեղի նման պատուտուեց  
տարածութեան ձայնը ահրնկեց:

Սիրտ իմ, լռի՛ր:

### ԵՂԵՐԱՄԱՅՐԵՐ

Անցա՛ն, անցա՛ն...  
Անսահմանից անսահման  
անցան լոյսեր  
ու վառեցին վարսերը մեր:  
Անցա՛ն, անցա՛ն...

## ՄԵՆԱԿԵՆՅ ՄԻ ՉԱՅՆ

Բի՛ւր աշխարհներ  
ընկան  
ու այրեցին աչքերս :  
Ո՞ւր են, ո՞ւր են բազուկներս . . .

## ՄԵՆՆԵՐԳՈՂ

Ո՛ր, ծով ծեծուած հրդեհներով, ալեկոծուած խա-  
ւարներով մրրիկ եւ բոց :  
Ահա բախում եմ սոսկալի հառաչներով  
աշխարհների սահմանները .  
Եթեբային հողմերը մղում են աստղերը եւ լոյսերը  
թափում են փռշիացած :

## ԵՂԵՐԱՄԱՅՐԵՐ

Արեւելից դէպի հիւսիս  
նախրեցին աստղեր  
ազետարեր  
ու վառեցին վարսերը մեր :

## ՄԵՆԱԿԵՆՅ ՉԱՅՆԸ

Զարկին, գարկին հողմերը  
երազներիս աչքերը . . .

## ՄԵՆՆԵՐԳՈՂ

Ո՛ր, ծով ծեծուած հրդեհներով եւ ձայների եղե-  
րական ու խօլ թափօր :

վայում են անյայտ տարածութիւնները : Խաւարից  
լոյս, լոյսից խաւար՝  
մեծ վշտերով բոցակիզուած,  
արիւնած,  
ասուպները վազում են, նեղում կուրծքը տարա-  
ծութեան ոսկէ թուրերով հոգիների եւ ձեռքերով կատա-  
ղած հողմերի :

Ու մէջը երկնքի  
հրարան մի  
լափում է սիրտը աստղերի  
վայում, վայում —  
մինչ ծնծղանները կայծակնախարհնում են ահեղ  
նամբաների վրայ Տիեզերքի ուր անցան ողբերը մղկտող  
ասուպների :

## ՉԱՅՆԵՐ

— Աւա՛ղ, աւա՛ղ, տարածութիւնը փոռեց մոխ-  
րացած . . .

— Աւա՛ղ, աւա՛ղ, ժամանակը յուսահատած վերջ  
է փնտռում եւ նպատակ . . .

— Լուսի՛ն՝  
ո՛ր վին անձայն .  
մարում կրակ,  
դիա՛կ, դիա՛կ . . .

— Ի՛նչ մղձաւանջ, ի՛նչ մղձաւանջ . —

— Աշխարհների կոյտերի վրայ շողանցիկներ  
փշրուեցին . . .

— Լուսի՛ն —

օ՛ր վի՛ն անձայն .  
մարուած կրակ ,  
դիա՛կ , դիա՛կ . . .

### ՄՇՆՏՐԳՈՂ

Վայում են անյայտ տարածութիւնները : Չայները  
սրտիս պաղատագին բարձրանում են ու մագլցում անջրպետի  
բարձրաբերձ լեռները

ուր Տիեզերքի միտքը մինակ՝ փայլում է ինչպէս  
մի սուտակ խորհրդաբեր եւ կարմիր , անդորր եւ վեհ ,  
թագաւոր լուսէ :

### ՄՇՆԱԿԵԱՅ ՋԱՅՆԸ

Անհունի մունջ գաղտնիքները  
սփռեցին աչքերս . . .

### ՄՇՆՏՐԳՈՂ

Աստղերը՝ ի՞նչ ժխոր :  
Հակատագի՛ր՝ բազմատեսիլ ցոլացում , արիւնների  
կրակում շինուած գերանդի ,  
որ հնձում է կեանքը պարող աշխարհների , լուս-  
սացնցուղ արեւների յոյսը հրահրան  
եւ պտոյտը մեղմատատան :

### ԵՂՏՐԱՄԱՅՐՏՐ

Քոյրե՛ր , քոյրե՛ր , լացէ՛ք մահը արեւների ,  
Քոյրե՛ր , քոյրե՛ր , լացէ՛ք մահը ասուպների :

### ՄՇՆԱԿԵԱՅ ՋԱՅՆԸ

Ամբոցները լուրջեան փլուեցին —  
մեռա՛ն , մեռա՛ն աչքերս . . .

### ՄՇՆՏՐԳՈՂ

Ծիր կաքիւնը առաջնորդեց քափորները յոյսերի եւ  
բաց արեց նամբայ մի մեծ  
փայլերիս տակ ահրնկեց . . .

### ԵՂՏՐԱՄԱՅՐՏՐ

Պիտի մեռնեն  
եւ յոյս եւ լոյս .  
պիտի մեռնեն՝  
անցնեն նամբից  
աստեղաշէն  
հոգիների :

### ՄՇՆՏՐԳՈՂ

«Եւ ձայն փողոյն հնչէր մեծաձայն . . .»

Կարելի է այս գիշեր ,  
անյայտ , անձայն ոգիներ ,  
երկրագնդի թաղումը  
պիտի երգեն տրամօրէն՝  
արցունքներով աստղերի ,  
հեծկլտանքով արեւի :

«Եւ ձայն փողոյն հնչէր մեծաձայն...»

Կամաց, կամաց դէպի անյայտ տանելով,  
երկրագնդի դիակը.

Եքերային սաւաններում փաթթելով  
երկրագնդի դիակը:

«Եւ ձայն փողոյն հնչէր մեծաձայն...»

### ԽՈՒՄԲԸ

Ասպե՛տ, ասպե՛տ, կայծկլտացող ձայնը փողիդ  
ն՞ւր է տանում մղկտացող, մինակ հոգիդ:

### ՄՇՆՆԵՐԳՈՂ

Հիւսիս՝ ներմակ դաշտեր,  
Հարաւ՝ սեւցած հողեր,  
Արեւելք՝ կարմիր մոխիր,  
Արեւմուտք՝ կապոյտ հովեր —  
կէտեր,  
որ կորան, որ կորա՛ն...

Գիսաւորները այրեցին տարածութիւնները: Մբբիկ,  
ամպրոպ եւ փոքորիկ՝  
պարում են խարոյկների վրայ աստղերի՝ պտը-  
տում, փշրում, այրում —  
փռչացած աշխարհների  
լոյսը քափում  
խռնարի կանգնած գիշերների աչքերի մէջ:  
«Եւ ձայն փողոյն հնչէր մեծաձայն...»

### ՅԱՆԿԱՐՑԱԿԻ ԽԱՒԱՐ ԵՒ ԽՈՐ ԼՈՒՌԹԻՒՆ:

— Աւա՛ղ, աւա՛ղ, տարածութիւնները վայր են  
քափում մոխրացած...  
— Աւա՛ղ, աւա՛ղ, ժամանակը գլորուեց մի վիհ  
ստոնամած...  
«Եւ ձայն փողոյն հնչէր մեծաձայն —  
պիտի գա՛մ, պիտի գա՛մ, պիտի գա՛մ...»

Հսկա՛յ է իմ Աստուած:

Ա Ն Ր Հ

ԱՆՄՈՒՄ ԱՅՍ՝ ԽՈՐՀՐԴՈՅ

## ԿՈՍՏԱՆԱՅ ՉԱՐՆԱ

դրոշմեցաւ ի տպարանի Մխիթարեան Հարց ի Վիեննա,  
ի թուին Հայոց ՌՅԶ:

Երեք հարիւր թուագրեալ (1—300) օրինակք մա-  
տենիս դրոշմեցան ի վերայ հոլանդական դեղնորակ թղթոյ՝  
գործատան Pannekoek եւ երկերիւր օրինակք ի վերայ  
աւստրիական թանձր «դիւանական» թղթոյ:

ԹԻՒ ՕՐԻՆԱԿԻ 51



2000

« Ազգային գրադարան



NL0087783

29130

891.99